№ 127 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 13

1906

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 13 № 127

ԵՐԵՍՈՒՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները ամեն տեղ 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օր'երից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր առղատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

Մագթաղի Հայրապետեան և նրա որդիք՝ Յովսէփ, Վահան, Միքայէլ, Գէորգի և Օվաննա խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին, առաջինը—իր թանկագին ամուսնու, իսկ վերջինները իրանց սիրելի և անմոռանալի բազմաշխատ հօր՝

ԻՍԱՀԱԿ ԱՐՏԵՄԻՉ ՕԷԼԻՔ-ԲԱԲԱԽԱՆԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ շաբաթ, յունիսի 10-ին, գիշերվայ 10 ժամին երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ։ Հոգեհանգիստը ամենայն օր երեկոյեան ժամը 7-ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը հինգշաբթի, յունիսի 15-ին, առաւօտեան 10 ժամին իր բնակարանից (Ողնէթսկի փողոց № 7) դէպի Ջրկինեանց եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 1—2

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը

յայտնում է, որ կիրակի, յունիսի 18-ին, առաւօտ. ժամը 11-ին, քաղաքային տան դահլիճում նշանակված է ընկերութեան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Զբաղմունքի առարկաներն են.

1. 1905 թ. հաշուի և 1906 թ. նախահաշիւների քննութիւնը և հաստատելը։
2. Վերստուգող յանձնաժողովի զեկուցումը։
3. Վարչութեան անդամների թիւը աւելացնելու հարցը։
4. Վարչութեան 3 հերթով դուրս գնացող անդամների և 2 հրաժարվողների փոխարէն (Տ. Յովհաննիսեանի, իշխ. Մ. Թումանեանի, Կ. Շիրինեանի, Գ. Մելիք-Կարագօզեանի և Լ. Տիգրանեանի) և նրանց 3 փոխանդամների ընտրութիւնը։
5. Վերստուգող յանձնաժողովի 3 անդամների և 2 փոխանդամների ընտրութիւնը։
6. Որբանոցի ամարանոց գնալու հարցը։
7. Փոխարքայից գաղթականների համար ստացած գումարի մնացորդով որբեր պահելու հարցը։
8. Ընկերութ. քարավանսարայի շահագործման հարցը։
9. Որբանոցում ուսումնարան բանալու խնդիրը։
10. Ընթացիկ հարցեր։

Այս ժողովը կը կայանայ քանի անդամ էլ որ ներկայ լինեն։ Ժողովին կարող են մասնակցել նրանք, որոնք վճարել են 1906 թւի անդամավճարը։

Ընկերութեան 1905 թ. տեղեկագիրը կարելի է ստանալ ընկ. գրասենեակում Абасъ-Абадская площадь, սեփական տուն ընկերութեան։

(և. հ. շ. կ.) առ. 1—4

Շարունակվում է բաժանորդագրութիւն

ՀԱՍԿԵՐ

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան—4 ր. (արտասահմանում 12 ֆր.), առանց մանկավարժական բաժնի—3 ր. (9 ֆր.)։ Հրատարակութեան սկզբից—5 ր. (15 ֆր.)։
Կէս տարվան—2 ր. (6 ֆր.), առանց մանկավարժական բաժնի 1 ր. 50 կ. ($4^{1}/_{2}$ ֆր.)։
Հասցէն՝ Тифлисъ, редакція «Аскеръ»,—Tiflis (Caucase) Rédaction «Hasker»։ 2—3
առ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կենտրոնական համագումար ժողով. Վերջին տեղեկութիւններ. Պաշտօնական կարգադրութիւն. Երևանի դէպքերը. Գիւղական ցաւերից. Հայոց ազգագրական ընկերութեան բացումը. Շարժումներ. Բելօստոկի ջարդը. Նոր հարկերի սպառնալիք. Մինիստրական «Sans Gêne» Նամակ Գանձակից. Նամակ Մոսկվայից. Մոռացված սնկլիններ. Նախազգուշութիւն ուսանող երիտասարդութեան. Թատրոն և երաժշտութիւն. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎ

I

«Մշակի» անցեալ համարում մենք զետեղեցինք Վեհափառ Կաթողիկոսի կոնդակը, որով առաջիկայ օգոստոսի 15-ին նշանակվում է ռուսահայ պատգամաւորների համագումար կենտրոնական ժողով։

Այդ ժողովը պէտք է հրաւիրվի նոր եղանակով։ Ժողովուրդը պէտք է մասնակցէ նախնական ծխական ընտրութիւններին և պատգամաւորներ ուղարկէ դէպի համագումար ժողովը հայ ազգաբնակութեան թուի համաձայն։

Ամեն մի եկեղեցի, որի ծխականների թիւը աւելի չէ քան 1000 հոգի, պէտք է տայ մի պատուիրակ և այնուհետև իւրաքանչիւր 1000 հոգու վրա պէտք է աւելանայ մէկը։ Յետոյ պատուիրակները իւրաքանչիւր շրջանում համախմբվելով պէտք է ընտրեն պատգամաւորներ կենտրոնական ժողովի համար։ Պատգամաւորների թիւն էլ համեմատական է. այսպէս իւրաքանչիւր 20,000 հոգու վրա հաշված է մի պատգամաւոր, իսկ ընդամենը ամբողջ Ռուսաստանի հայերի համար վաթսուն պատգամաւոր։

II

Մենք կարծում ենք, որ 60 հոգին քիչ է։

Ամենայն հեշտութեամբ և յարմարութեամբ կարելի էր այդ թիւը ոչ միայն կրկնապատկել, այլ և եռապատկել։

Եթէ պատգամաւորների թիւը լինէր 180, իւրաքանչիւր շրջանից ներկայ կը լինէին բաւական թւով պատգամաւորներ և կարելի կը լինէր աւելի կատարեալ կերպով ներկայացրած լինել ժողովրդական ձայնը։

Ներկայ հրահանգով օրինակ ամբողջ Բեսարաբիայի թեմը պէտք է տայ մի, իսկ Աստրախանի թեմը 2 պատգամաւոր։ Դա չափազանց քիչ է։

Մանաւանդ դա կարևոր է սկզբում, առաջին համագումարի համար, որ պէտք է զբաղվի հիմնական, կազմակերպական հարցերով։

Եթէ մեր Թիֆլիսի քաղաքային Դուման ունի 80 ձայնաւոր, եթէ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւն ընտրելու համար նշանակված պատգամաւորական ժողովը կարող է բաղկացած լինել 90 հոգուց, եթէ հայ-թուրքական մի խորհրդակցութիւն պարունակում էր 70 հոգուց աւելի անձ, ինչու ռուսահայերի կենտրոնական ժողովը պէտք է այդքան փոքր կազմութիւն ունենայ, քանի որ նա պէտք է կրէ համազգային ներկայացուցչութեան բնաւորութիւն։

III

Կոնդակը ընտրող անձերի համար սահմանում է 21 տարեկան հասակ։

Լաւ որոշում է։

Մինչև այժմ մեզանում այդ հասակը ընդունվում էր 25 տարեկան։ Նորամուծութիւնը նպատակայարմար է և 21 տարեկան հասակը կը գոհացնէ արդի պահանջները։

Հետաքրքրական է սակայն պարզել՝ արդեօք «ժողովուրդ» ասելով հասկացվում է միայն տղամարդը, թէ նոյնպէս և կին մարդը։ Դա կարևոր է առաջուց բացատրել, որպէս զի միօրինակութիւն լինի ընտրողական գործի մէջ ամեն տեղ։

Կանանց մասնակցութիւնը սկզբում կը լինի թոյլ, բայց նա ժամանակով կուժեղանայ և կարող կը լինի ազդել ընտրութիւնների արդիւնքների վրա։

Ցանկալի էր, որ հրահանգը նոյնպէս մատնացոյց անէր թէ արդեօք պատուիրակներին կից ընտրվում են փոխանորդներ, որոնք փոխարինէին պատգամաւորին, եթէ սրանք հնար չունենային գնալ կենտրոնական ժողովի։

Պէտք է այդպիսի դէպքերի համար ցուցմունքները, որոշումները պարզ լինեն և թիւրիմացութիւնների տեղիք չը տան։

IV

Ժողովի պարապմունքների մասին կոնդակում ասված է հետևեալը.

«Առաջիկայ նստաշրջանի առաջ դնում ենք իբրև անյետաձգելի կարևորութիւն ունեցող խնդիրներ՝ դպրոցական, անտեսական գործերը և թեմական ժողովները կարգաւորելու հարցերը»։

Դրանք կարևոր և անհրաժեշտ հարցեր են, բայց մենք կարծում ենք, որ առաջնակարգ հարցերի թւում պէտք է դնել կենտրոնական համագումար ժողովներ հրաւիրելու և ընտրողական գործը կազմակերպելու հարցերը, որովհետև ապագայ ընտրութիւնների և համագումարի համար պէտք է վերացված լինեն այն բոլոր անորոշութիւնները, որոնք ներկայումս անխուսափելի կերպով գոյութիւն ունեն։

Անշուշտ կարևոր են նոյնպէս կոնսիստորիաների և սինոդի պաշտօնավարութեան վերաբերեալ հարցերը, որոնք կապ ունեն միւս հարցերի հետ։

Յամենայն դէպս և այն հարցերը, որոնք դրված են ժողովի առաջ ներկայ կոնդակով, ծանրակշիռ և խոշոր հարցեր են, որոնք կը պահանջեն պատգամաւորներից գիտութիւն և աշխատանք։

V

Մենք, անկասկած, ուրախ ենք, որ Էջմիածինը շտապել է կատար ածել մայիսի 10-ի կոնդակը և նշանակել է առաջիկայ համագումարը։ Բայց չենք կարող միևնոյն ժամանակ չը խոստովանել, որ ընտրութիւնների և համագումարի համար նշանակված ժամանակները շատ անյարմար են։

Արդարև ծխական ընտրութիւնները պէտք է վերջանան մինչև յուլիսի 15-ը, իսկ համագումարը պէտք է տեղի ունենայ օգոստոսի 15-ին։

Ամառը գիւղացիները զբաղված են իրանց դաշտային պարապմունքներով, իսկ քաղաքացիների մի մասը բացակայ է և դժուարութեամբ է եկեղեցի գնում։ Օգոստոսի 15-ին Էջմիածնում դեռ շատ շոգ է լինում։

Եւ արդեօք կաջողվի ընտրութիւնները վերջացնել նշանակված ժամանակներում։

Մենք երկիւղ ենք կրում, որ ժամանակի անյարմարութեան պատճառով համագումար կազմելու գեղեցիկ գաղափարը անաջողութեան չը հանդիպէ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 12 յունիսի

Պետական Դումայի նիստում մինիստրների խորհրդի նախագահին արված հարցապնդումի առիթով հայ պատգամաւոր Գեղամ Տէր-Պետրոսեանցը նկարագրելով հայ-թուրքական ընդհարումներից առաջացած սոսկալի թշուառութիւնները, հրաւիրեց Դումայի ուշադրութիւնը դժբաղդացած երկրի վրա։

Խօսեցին նաև Րամիշվիլի և ուրիշ պատգամաւորներ։

Պետական Դուման առաջարկում է Անդրկովկաս ուղարկել Դումայի կողմից քննիչներ, ինչպէս նա արեց Բելօստոկի դէպքում։

—

Երևան 11 յունիսի

Երէկ կէս օրից յետոյ ժամի չորսի մօտերքը Զանգուի միւս կողմից Ծիծեռնակաբերդ կոչված բլրից Թուրքերը հրացանաձգութիւն սկսեցին Մելիք Աղամալեանների տան վրա, Կոնդում։ Անմիջապէս դրանց պատասխանեցին զինուորները։ Ասում են որ Թուրքերից վիրաւորներ կան. ստուգել անհնարին եղաւ։ Ենթադրվում է, որ այդ հրացանաձգութիւնը Թուրքերը սկսել են այն նպատակով, որ այդ տան վրա դարձնեն զօրքի ուշադրութիւնը և ռմբակոծութեան ենթարկել տան... Թուրքերին իրանց այդ դիրքից հալածելու համար ուղարկվեցին մի հարիւրակ կօզակներ, որոնք քանդեցին այդ դիրքը։ Հայերի կողմից ոչ մի հրացանաձգութիւն չեղաւ։

Այսօր խաղաղ է, շուկան ամբողջապէս փակ։

Շնգաւիթ գիւղից մի քանի օր առաջ Թուրքերի ձեռքով փախցրված հայ աղջիկը յետ խլվեց և կենթարկվի բժշկական քննութեան։

Լ. Մարկոսեան

—

Յունիսի 5-ին (Ջիբրայիլ, Կարեագ. գաւառ).

Համաձայն գեներալ-նահանգապետ Գոլոշչապովի հեռագրի, Ջիբրայիլ եկաւ գաւառապետի օգնական պ. Քութաթելաձէն ստուգելու և քննելու Թուրքերի գեներալին տուած հեռագիրը, որով խնդրում են գեներալից ազատելու հայերից բռնված 49 պարսկահպատակ մշակներին, որոնք Խուդաֆերինից գնալիս են եղել Կարեագինոյ գիւղը դէպի Աղդամի կողմերը հունձ անելու։

Պ. Քութաթելաձէն տեղս մնալով երկու օր և լաւ քննելուց յետոյ, Թուրքերի հնարովի սուտը երևան հանեց և այս զրպարտութեան համար հեռագրեց գեներալին։ Ջիբրայիլ եկաւ ամենքին յայտնի Հուսէյին-աղան, որին Ջիբրայիլի հասարակութիւնը ատելով ատում է. եթէ երկար տեղս մնալու լինի, այս անհատը կը սարքէ մի շարք սպանութիւններ, մաքսատնի պաշտօնեայ Արիստակէս Տէր-Սրապիոնեանցի սպանութեան օրինակներով։

Մ. Պօղոսեանց

—

Գանձակ, յունիսի 8-ին

Պրովոկացիան մեզանում մի րոպէ անգամ դադար չէ առնում. վերջին օրերս սկսել է գործել առանձին եռանդով։ Բելօստոկի գազրելի պրովոկատորների աջողութիւնն ու քաջագործութիւնները շարժել են գանձակեցնոց պրովոկատորների նախանձը. Նրանք հանգիստ քուն չունեն այժմ։ Պրովոկատորներ կան ամեն կարգի ու աստիճանի, սկսած հասարակ գրագիրներից ու ստորոժներից, մինչև վերի աստիճանների վրա կանգնածները, որոնցից յաճախակի լսում ենք՝ «Մենք յոգնեցինք, ձանձրացանք ձեր գանգատները լսելուց, յոգնեցինք ձեզ պաշտպանելուց (իսկ եթէ հարցնեք՝ երբ և ինչպէս էք պաշտպանել, պատասխան չեն գտնի). բաւական է, ազատեցէք մեզ ձեզանից. եթէ ձեր արեան ծարաւին յագուրդ չէք տուել դեռ, կոտորեցէք իրար. կամ դուք կը յաղթէք, կամ Թուրքերը. այլ կերպ ձեզանից ազատվելու, ձեր գանգատներին վերջ դնելու հնարաւորութիւն չը կայ...» Նորերս մի դիրքով հայ, պետական պաշտօնեաների հետ միշտ հաղորդակցութեան մէջ գտնվող, վերև բերած բառերը նոյնութեամբ լսել է մի բարձրադիր պաշտօնեայից, որը մեծ ազդեցութիւն ունի տեղական կօզակ գործի վրա։ Կան, ի հարկէ, բարեխիղճ պաշտօնեաներ, բայց տարաբաղդաբար նրանք սակաւաթիւ են ու, որ ամենացաւալին է, ազդեցութիւնից բոլորովին զուրկ են։ Տիրապետող հոսանքներին ընդդէմ գնացողները, իշխող տրամադրութեան չենթարկվողները տուժում են, պաշտօնազուրկ են լինում (օրինակ Շուշու գաւառապետի օգնական Մելիքովը), իսկ նոյեմբերի 18-ի դահիճները, Թուրք ոստիկանները, սկսած ոստիկանապետից մինչև գորոդովոյները, առաջադիմում են իրանց պաշտօններում, խրախուսվում, քաջալերվում են. մի հատ, գոնէ մի հատ նրանցից չը կայ պաշտօնազուրկ եղած կամ դատի ենթարկված... Երկու օր առաջ լուրեր էին տարածել, որ հայերին Թուրքաց մասում վտանգ է սպառնում, չը գնան այնտեղ. ինչպէս լսում ենք, Թուրքերին էլ ասում են, որ հայոց մասը չանցնեն։ Չորս օր առաջ մի հայախօս Թուրք երեկոյեան գալիս է հայոց քաղաքամասը, շրջում ու յետոյ մի կառք վարձում Թուրքաց մասը գնալու համար. ճանապարհին կրակում է ետևից կառապանի վրա ու ծանր վիրաւորում. մտադիր է լինում կառքը թողնել, բայց չէ աջողվում. ինքը փախչում է Թուրքաց թաղը։ Երևակայում ենք՝ ինչ կը պատահէր, ինչեր կանէին հայերի հետ ու ինչեր կասէին, եթէ նոյն բանը հայ անէր։ Թուրքաց քաղաքամասում յաճախակի լսվում են հրացանի ձայներ։

Հալուկեան

—

Գանձակ, 11 յունիսի

Երկու օր առաջ քաղաքիս «Կիսլովոդսկ» նորաշէն այգում օր ցերեկով սպանել են Յակոբ Սիմէօնեանին։ Վերջինս մի քանի օր առաջ մեղադրվում էր Եղիեանի սպանութեան մէջ, որի ձեռքից յանկարծ ատրճանակը բացվել էր և Եղիեանին սպանել։ Երկուսի կորուստն էլ մեծ ցաւ պատճառեց ազգաբնակութեան։

—

Գրենդերսկոյէ (Կարսի շրջան) 8 յունիսի

Մայիսի 30-ին ղըլչախչալըի (Շիրակի գաւ.) գիւղացիների մօտ 30 հոգի բոլորովին անզէն, Կարսից դէպի իրանց եայլատեղը, Մշկօ վերադառնալիս, Ղուլբի-Դարա կոչված ձորում, նրանց վրա յարձակվում են 15-ի չափ զինված Թուրքեր և քիւրդեր, սպանում են երեքին, չորսին էլ ծանր վիրաւորում։ Փախած և վիրաւոր հայերի ցուցմունքով Թուրքերից 7-ը բռնվում են։ Մեր նահանգապետ Սամոյլօվի ձեռք առած խիստ միջոցների շնորհիւ յոյս կայ, որ միւս մարդասպան Թուրքերն էլ բռնվեն և իրանց պատիժը կրեն։ Հէնց դրա համար էլ ինքը ծերունի նահանգապետը, ամսիս 21-ին եկաւ գիւղս, տեղական դիւանատունը կանչեց Թուրքերին, իւրաքանչիւր գիւղից 2—3 հոգի, յորդորեց, խրատեց որ հայերի հետ հաշտ ապրեն, չը լսեն գրգռիչների խօսքերին։ Եւ վերջն էլ աւելացրեց, որ եթէ վերոյիշեալ դէպքի նման դէպքեր կրկնվեն, իմացած եղէք, որ մեծ պատժի և տուգանքի կենթարկվէք։ Նահանգապետը շարունակեց իր ճանապարհը դէպի Շիրակի և Աղթաբայի կողմերը։

Ցաւելով պէտք է ասեմ, որ մեր նահանգապետը ծերութեան պատճառով թողնում է իր պաշտօնը։ Ցանկանանք որ նոր նահանգապետն էլ հետևէր իրա նախորդի օրինակին, որի պաշտօնավարութեան ժամանակ հայ-թուրքական ընդհարումները արձագանք չը գտան մեր կողմերում։

Վ. Աւետիսեան

—

Գորիս, (Զանգեզ. գաւ.) մայիսի 30-ին

Ցերեկվայ ժամը 2-ին, Զանգեզուրի գաւառի Նուվադի և Մարզիգիթ գիւղերից դուրս եկաւ զինված Թուրքերի մի ահագին խումբ և Գեմարան աւանում յարձակվեց հայ ճանապարհորդների վրա և սպանելով շիշկերցի Ա. Վարդանեանին և ծանր վիրաւորելով խաղաղարար մասնաժողովի անդամ Արիստակէս Թումանեանին և երեք բլխեցիներին, խլեց նրանցից բոլոր ունեցածը, 4 ջորիներ և 4 ձիեր։ Կողոպտողները չեն ձերբակալված։

(Кавк.)

—

Բաղաքենդ, 6 յունիսի

Այս ամսիս 4-ին կարկուտը տարաւ Բաղի աշնանային ցանքերը մօտ 700 դեսեատին։ Կարկուտից փչացվեցին և հարևան Թուրքերի ցանքերը։ Սկսած Թօուզ կայարանից մինչև Դալլար կայարանը երկաթուղից վերևը։ Բաղեցիք միակ յոյսը դրել էին իրանց ցանքերի վրա, բայց այդ յոյսն էլ խորտակվեց։ Ի՞նչ կը լինի նրանց վերջը և ինչով կապրեն միւս տարին, Աստուած գիտէ։

—

Հետաքրքրական համարելով մեր ընթերցողների համար Փոխարքայի խորհուրդի նախագահ Վէյդենբաումի անունով մօտ ժամանակներս ստացված հեռագիրները, առաջ ենք բերում.

1) Աղդամ, 9 յունիսի

Գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ երէկ Դօժենլի Դօրաթլուեցի քոչւորները ճանապարհվեցին դէպի իրանց ամառային արօտատեղերը։

Դաշբուլաղի հայերը յարձակվեցին նրանց վրա, սպանեցին հովիւներին և քշեցին տարան 450 գլուխ սևատաւար։ Պրիստաւ Վօսկրեսենսկին հրաժարվեց հետամուտ լինել նրանց։

Տանուտէրի օգնական Ղուրբան

2) Երևան, 31 մայիսի

Մայիսի 27-ին երկու հոգի կռւում էին առևտրի հրապարակում. այդ միջոցին խանութների շարքերից գնդակի ձայն լսվեց. ժողովուրդը սարսափահար սկսեց փախչել այս ու այն կողմ, իրար վրա կրակելով։ Խաղաղարար խորհրդակցութեան մասնաժողովի անդամները համերաշխ չեն գործում. ոչ մի միջոց ձեռք չէ առնված։ Խնդրում ենք ուղարկել Փոխարքայի կից հաստատված խորհրդակցութեան մասնաժողովի երկու անդամներին ճշմարտութիւնը վերականգնելու համար։

Խան-Մակինսկի

Երևան, 9 յունիսի

Երէկ շուկայում և քաղաքի բոլոր մասերում հայերը կազմակերպված խմբերով յարձակում գործեցին Թուրքերի վրա. սպանված ու վիրաւորված են մօտ 20 հոգի մուսուլմաններ։ Այսօր առաւօտեան հայերը մահացու կերպով վիրաւորեցին մէկին, հրդեհեցին մի տուն։ Մուսուլմանների վիճակը կրիտիքական է։

Բեազումով, Ռահիմով, Մամեդբէգով, Ֆէյզուլլաբէգով, Աբաս-Ալի Միրբաղիրով։

—

Կովկասեան Փոխարքայի դիւանատունը ստացել է Գանձակի գեներալ-նահանգապետ Ալֆտանից հետևեալ զեկուցումը.

Ղազախի գաւառի հայերի ու Թուրքերի վէճերը փոխադարձաբար հաշտեցնելու հարցի և միևնոյն ժամանակ տեղեկութիւններ հաւաքելու համար, թէ գաւառի ազգաբնակութիւնը որքան է մացրել վէճերը վճարելու համար և թէ ինչ գործադրութիւն են ստացել այդ հաւաքված փողերը, գնում եմ Ղազախ աւանը և հաւաքած տեղեկութիւնների մասին կը հաղորդեմ Նորին Պայծառափայլութեանը զեկուցանելու համար։

—

Երևան, յունիսի 10-ին

Յունիսի 8-ի դէպքից յետոյ դրութիւնը մի քիչ խաղաղ էր, բայց կէս գիշերին յանկարծ միաժամանակ լսվեց զանազան թաղերից ուժեղ կրակ։ Միւս օրը անցաւ խաղաղ, բայց երեկոյեան $7^{1}/_{2}$-ին Շհար թաղում նորից եղաւ ուժեղ հրացանաձգութիւն դէպի հայերը, որ տևեց 15 րոպէ, յետոյ թուլացաւ 10 րոպէի չափ։ Բարեբաղդաբար հայերից ոչ մի զոհ չը կայ։ Զօրքը, կօզակները դուրս եկան և հրացանների ձայնի վրա գնացին Թուրքերի բուլվարի ուղղութեամբ, որտեղ Միր-Բաբաեվների տնից կրակում էին։ Անմիջապէս զօրքը զալպ տուեց և մատաներս, բայց ոչ ոք չըկար։ Միր Բաբաեվների մեծ եղբայրը Թուրքերի խաղաղարար յանձնաժողովի անդամներից մէկն է։ Խաղաղարար յանձնաժողովի անդամ է և Փանահ-խանը, որը պօստի մօտ գտնվող «Տրու» դաֆխանէն փակելու արգելք էր հանդիսանում, բայց հայ հասարակութեան խնդիրը գեներալ-նահանգապետը յարգեց և փակել տուեց։ Միր-Աբաս աղա և Փանահ-խան լաւ կը խաղացնեն՝ երկու ազգերին։ Մինչև հիմայ սպանված կան հայերից 4 հոգի և մէկ վիրաւոր։ Թուրքերից սպանվել են 7 հոգի և մի քուրդ ու մի Թուրք էլ վիրաւոր։ Թուրքերը չեն երևում, բոլորը փակվել են իրանց նկուղներում։ Շուկան ամբողջապէս հայերի ձեռին է, բայց մեծամասնութիւնը փողոցում։ Երեք օր է ինչ խանութները փակ են. յունիսի 8-ին ճանապարհորդ նորգցիներին բռնել էին, իբրև զէնք կրողներ. այսօր լուր ստացայ, որ կազատվեն կալանաւորութիւնից։ Տիրում է մթերքների կատարեալ թանգութիւն։ Դրութիւնը առ այժմ խաղաղ է։

Պար. Տէրունեանց

—

Երևան, 10 յունիսի

Երէկ առաւօտեան հրացանաձգութիւնից յետոյ խաղաղ անցաւ մինչև երեկոյեան ժամի 7-ը, երբ դարձեալ վերսկսվեց նոյնը այս անգամ Շհար թաղից աւելի կատաղի կերպով, միմիայն Թուրքերի կողմից։ Այս անգամ հայերը չէին պատասխանում Թուրքերին, որոնք Փանահ խանի փողոցում շղթայ կազմած՝ մի քանի դիրքերից անընդհատ կրակում էին դէպի հայերի կողմը։ Գնդակներ են արձակվել, ինչպէս ասում են, ռուս օֆիցերների և նոյնիսկ Նահանգապետի վրա. թէ որքան այս վերջինը ճիշտ է, չենք երաշխաւորում, որովհետև դրան հայ ականատես չէ եղել, իսկ ժողովրդի մէջ սուտը այսպիսի դէպքերում տարածվում է հրէշաւոր չափերով։

Թուրքերի դէմ անմիջապէս դուրս է գալիս զօրքը և ստիպված է լինում համազարկերով լռեցնել նրանց. ապա յարձակվում է Թուրք առաջնակարգ հարուստ Միր Բաբաեվի տան վրա, որը Թուրքերի հրացանաձգութեան դիրքերից մէկն է եղել, և գնդակների կարկուտից յետոյ քարուքանդ անում... Մարդկային զոհեր չեն եղել, սա մի լաւ դաս կը լինի անշուշտ Թուրքերին։

—

Զարդախլու, յունիսի 8-ին

Բնութիւնը երեսը դարձրել է բաղեցիներից։ Նրանց անվերջ թշուառութիւնը և վեց ամսվայ թափառաշրջիկ կեանքը Գանձակի գիւղերում, բաւական չեղաւ, կարկուտն էլ պակասը լրացրեց։ Ամսիս 4-ին սարսափելի կարկուտ տեղաց, որից սաստիկ փչացել են թէ արտերը և թէ բոլոր բուսականութիւնը։ Այս ձմեռվայ միջոցին կրած բոլոր զրկանքներից փոքր ինչ շունչ քաշելու միակ յոյսը արտերն էին, որ պէտք է ասած շատ առատ հունձ էին խոստանում և կարելի էր յուսալ, որ կիսով չափ կազատէին բաղեցիներին իրանց անտանելի թշուառութիւնից։ Այդ միակ յոյսը ևս կորաւ և բաղեցին մնաց կրկին բաղդի կամքին յանձնված և բարեհոգի մարդկանց ձեռքին նայելիս։ Նա մնաց ազգի վզին մի ծանր բեռ։ Նրանք ըսպասում էին, որ հունձն ընկնելուն պէս տեղափոխվեն իրանց գիւղը և այժմ մնացել են յուսահատ և չը գիտեն ինչ անեն։ Նայում ես այս կիսամերկ, քաղցած, ապուշ կտրած դէմքերին և մտածում. միթէ մարդկութիւնը իր մէջ Աստուածային պատկերն է կրում...

Կարկուտը սաստիկ վնասել է և դաշտային Թուրքերի արտերին, Զագամից մինչև Դալլար կայարանը։ Սպանել է եղջիւրաւոր անասուններ և շատերի աւելով, շատ Թուրքեր Այիփլուից կայծակնահար են եղել։ Զագամից բարձր մի տեղ 12 հոգի հունձ անելիս, կայծակի մի հարուածով սպանվել են։

Գ. Ք. Ման.

—

Ղայաբաշի (Նուխու գաւառ), յունիսի 5-ին

Յունիսի 4-ին երեկոյեան ժամի 6-ից սկսվեց պարզ երկնակամարը ծածկվել սև մթին ամպերով մեր դաշտավայրի ուղղութեամբ. չոլերից շատերը փախչում էին տուն, միայն դրսից եկած հայ և Թուրք հնձողները, կկզած ալաչուխների տակ, աչքերը յառած սև ամպերի մակերևոյթին «Աստուած-Աստուած» էին փսփսում։ Նախ մի սաստիկ որոտաց, կարծես երկինքը փուլ եկաւ գլխներիս, ապա որոտ, կայծակ. մի քանի րոպէ տևեց՝ այդ դեռ նախերգանք էր։ Նորից և նորից սկսվեց մի չը տեսնված ու չը լսված հեղեղ ու կարկուտ։ Ջուրը թափվում էր ջրաղացի անիւից արտավիժածի պէս, ընդհատվում էր մի քանի րոպէով, նորից որոտ, կայծակ ու կարկուտ, մեծը հաւկիթի չափ, փոքրը ճզոպրի. տևեց 6 ժամ. արտերի մեծ մասը ոչնչացված է, բնի վրա ոչ մի բոյս չը կայ։ Սիլիկեան եղբայրների կալուած Բայան անուանեալ հովտանման դաշտավայրը ծածկված է ջրով. որանները ջրի մակերևոյթին լողում են։ Հովիտը ներկայացնում է բնական լիճ։ Վնասված են հարևան հայ գիւղերից Զայքենդ, Եազուբլու, Զառաֆ, Թուրք հարևան գիւղերից Ղարադոյնլու, Ջագիւալու, և Դահնու ցանքերը։ Հարիւր տարեկան ծերունիք չեն յիշում այսպիսի դառն քրտինքով հասունացրած արտերի ոչնչացումն։

Ե. քահ. Տ.-Ստ.

—

Շամախի, 11 յունիսի։ Ցերեկվայ ժամը 3-ին զգացվեց խառն և կարճատև երկրաշարժ, հիւսիս-արևմուտքից դէպի հարաւ-արևելք ուղղութեամբ։ Մարդկանց հետ դժբախտութիւն տեղի չունեցաւ։

Հեռ. Գործ.

—

Ղըլ-Արվատ կայարան (Անդրկ. շրջան) յունիսի 7-ին

Յունիսի 6-ին, ինչպէս պատմեցին մեզ,

վախից սրտաճաք եղած ռուս երեխաները, որոնք ցերեկով գիւղաքաղաքից երկու վերստ հեռաւորութեան վրա գտնուող այգու մօտ խաղալիս են լինում, պատահում են նրանց չորս զինուած Թուրքեր, որոնք մօտենալով երեխաներին, կանգ են առնում և ուշադրութեամբ լսում նրանց խօսակցութիւնը։ Մի փոքր ժամանակից յետոյ սկսում են հարցնել երեխաներին, թէ ո՞րն է նրանցից հայ։ Երեխայքը պատասխանում են, որ իրանց մէջ հայ չը կայ, այլ բոլորը ռուսներ են, բայց Թուրքերը մէկին հայի նմանեցնելով՝ սկսում են դաշոյները քաշել նրանց վրա, որ ասեն թէ ո՞րն է հայը։ Երեխաները սկսում են սուք ու շիվան անել, ասելով որ իրանց մէջ հայ չըկայ։ Վերջապէս Թուրքերը համոզւում են, որ դրանցից ոչ մէկը հայ չէ և թողնում հեռանում են։

Երեխաները վերադառնալով տուն, պատմում են իրանց ծնողներին իրանց տեսարանը, իսկ երեխաների ծնողները յայտնում են ոստիկանութեան, որ հետեւանքը այն եղաւ, որ այս վերջին օրերս կազակները նրանցից երկուսին բռնեցին զինուած մօսիներով, իսկ միւսները անյայտ կորան։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Խանքենդ-աւան, 8 յունիսի։ Խանքենդու զինուորական կլուբի առաջ կանգնած են խանքենդցիները, Կարկաժանու և Ղայբալուի հասարակութիւնները։ Դրանք հայեր են. չը կայ ոչ մի Թուրք. եկած են գանգատներ անելու, իրանց դարդերը ասելու և դարման խնդրելու, իրանց վէրքերին սպեղանիք դնել տալու։

Բարձր պատշգամբի վրա կանգնած է գեներալ Գոլօշչապօվ, Վօյժակի գնդի հրամանատար գնդապետ Բիբիկինը և շատ սպաներ։

Խանքենդցիները ներկայացնում են խնդրագիր և բանաւոր բողոքում են, որ Մալիբէկլուի Թուրքերը կտրել են Խանին-բաղի խճուղու ճանապարհը, մաղէ կամուրջը, անցնող հայերին գնդակահար են անում և թող չեն տալիս օգտուել ճանապարհից և գնալ զանազան կողմեր՝ հաց աշխատելու։ Խնդրում են բանալ ճանապարհը և սպանութիւնների առաջն առնել։

Գեներալ Գոլօշչապօվ քաղցրաբար, սիրով պատասխանում է, որ Աղդամի կողմերին, ճանապարհում, Թուրք կանայք հերարձակ իրանց երեխաների ձեռքից բռնած ճանապարհս կտրում էին և լաց—արտասունք թափելով աղաչում, իրանց պաշտպան հանդիսանալ իրանց կոտորող արմէններից։ Նրանք բողոքում էին, որ հայերն իրանց կոտորում են, դուք էլ գանգատւում էք, որ Թուրքերն են ձեզ կոտորում։ Այսուհետեւ, արխային կացէք, ոչինչ սպանութիւն չի լինի, Թուրքերը խոստացած են խաղաղ մնալ, դուք էլ խաղաղ մնացէք և ձեր մէջ այն մարդկանց, որոնք անկարգութիւն են յարուցանում, բռնեցէք և մեր ձեռքը յանձնեցէք, որպէս զի երկիրը խաղաղվի։ Եթէ Թուրքերի հետ այսուհետեւ խաղաղ չը վարվէք և նորից սպանութիւններ գործէք, այն ժամանակ ես իմ զօրքս վեր կառնեմ, դուրս կը գամ այս երկրից, այնուհետեւ դուք և Թուրքերը ինչ ուզում էք, արէք...

Բողոքում են կարկաժանցիները, որ Շուշի քաղաքի Թուրքերը կտրել են Շուշու ճանապարհը, թոյլ չեն տալիս փայտ և խոտ տանելու, ծախելու և հաց գնելու, անցորդներին գնդակահար են անում և իրանք մնացել են քաղցած։

Խանքենդեցի Սարգիս Միրզոյեանցը բողոքում է, որ Շուշուց գալիս, քերծին տակին երկու զինուած Թուրք յարձակվում են, սպանում իր ընկեր Ալէքսան Գաբրիէլեանցին և տանում իր ձին. խնդրում է ետ պահանջել ձին այսինչ Թուրքից (տալիս է անունը), որ Շուշւում է ապրում և ասում է. նրանով ես կերակրում էի 8 անդամից բաղկացած մի ընտանիք։

Գեներալը սրան պատասխանում է. դու ըսպանել ես քո ընկեր Ալէքսանին և յանցանքը Թուրքի վրա ձգում, գնա, ամօթ է, այդպիսի դատարկ գանգատներ չեն անի...։

Բողոքում են Ղայբալուեցիները։ Նրանք կրկնում են նոյնը, ինչ որ կարկաժանցիները, որ Շուշու Թուրքերը կտրել են ճանապարհը թող չեն տալիս քաղաք գնալու և փայտ ծախելու, ապրուստ անելու համար, որ խալֆալուեցիները սպանել են իրանցից 4 հոգի, որ Թուրքերը մնում են անպատիժ, որ քաղաքի կողմից Թուրքերը գնդակներ են արձակել, պրիստաւին սպանելու և նա փախչելով պատսպարվել է Ղայբալուում և խնդրում են բարեհաճ կարգադրութիւն, ճանապարհները բանալու և իրանց հովանաւորելու հանդի աշխատանքի ժամանակ։

Գեներալը սրանց պատասխանում է, որ ձեր բողոքները բոլորն էլ շինծու են, սուտ են, որ դուք Թուրքերին գնդակ էք արձակել, չէք թողնում նրանց կալ և մածուն տանելու քաղաք և սպանել էք Խալիֆալուի Թուրքերին։ Ձեր գիւղացի Սարգիսովը նրանց վրա գնդակ է արձակել, եթէ միւս անգամ ձեր գիւղի կողմից Թուրքերի վրա գնդակ արձակվեց, թնդանօթները կը կապեմ և կաւերեմ ձեր գիւղը, խելօք կացէք, հանգիստ եղէք։

Այս պաշտօնական կարգադրութիւններն անելով՝ գեներալը գնաց Շուշի։

ԵՐԵՒԱՆԻ ԴԷՊՔԵՐԸ

Յունիսի 11-ին

Այս քանի օրերս տեղի ունեցած ընդհարումները Թուրքերի կողմից պէտք է համարել ամենայանդուգն։

Ամսիս 8-ին դեռ ևս առաւօտեան նկատւում էր ջանբէգարների ստուար բազմութիւն մսագործների շարքում և Գիօյ-մէջիդի մօտակայքում։ Նրանց բռնած դիրքից ուղղակի «արիւն հոտ էր գալիս»։ Հէնց այդ նկատելով՝ կառավարութիւնը և հայերը զգուշութեան միջոցներ ձեռք առան։ Ժամի 10½-ին Գիօյ-մէջիդի կողմից դուրս եկան մի խումբ ջանբէգարներ և սկսեցին կրակ բանալ մէյդանի առաջ գտնվող հայ խանութպանների վրա։ Հայերից մի քանիսը պատասխանեցին նրանց և Թուրքերը փախան։ Այստեղ սպանվեց հրապարակաւոր սարաֆ Հասան էֆենդին, որ ամենատեռանդոտ պրօպագանդիստներից մէկն էր։ Երբ Թուրքերը հայերի ընդդիմադրութիւնը տեսնելով փախուստի են դիմում, նա սկսում է նրանց նախատել թէ «աղամօլանդա էրմանիդան գօրխար մը», բայց այս խօսքը դեռ չը վերջացրած՝ հայի գնդակը վերջ է դնում նրա զզուելի գոյութեանը։ Փախչող Թուրքերին Գիօյ-մէջիդից օգնութեան են հասնում պահեստի խմբերը և նրանք սիրտ առած նորից սկսում են կրակ բանալ հայերի դէմ։

Հէնց այդ րօպէին անցքի տեղն են հասնում զինուորները և կօզակները։ Թուրքերը նրանց էլ են կապում գնդակի, բայց յետոյ չը դիմանալով նրանց կրակին՝ փախչում են դէպի Գիօյ-մէջիդ։

Միաժամանակ մէյդանի շուրջն եղած Թուրքական բոլոր խանութներից և դայֆախաններից սկսում են կրակ թափել հայերի և զինուորների վրա, բայց վերջիններիս աջողւում է մաքրել մէյդանը այդ աւազակներից։ Մէյդանում հայերից սպանվել է կառապան Անդրէաս Մարտիրոսեան։

Մսագործների շարքում, որ գտնվում է քաղաքային այգու դիմաց, երբ լսվում է մէյդանի հրացանաձգութիւնը, այդտեղ ժողոված ջանբէգարները երբ լսում են մէյդանի հրացանաձգութիւնը, իսկոյն սկսում են կրակ թափել այգում գտնվող և անցնող հայերի վրա։ Վրա են հասնում կօզակները և զինուորները։ Թուրքերը նրանց վրա էլ են շարունակում կրակ թափել, բայց վերջը չը դիմանալով փակվում են խանութներում և սկսում այնտեղից գնդակ թափել։ Զինուորները և կօզակները երկարատև և սաստիկ գնդակահրութիւնից յետոյ, ստիպեցին նրանց բանալ խանութները և անձնատուր լինել։ Նրանց զինաթափ արեցին և բանտարկեցին։ Այդ խանութները կնքված են։

Միաժամանակ այս անցքերի հետ Թուրքական տներից սկսեցին կրակ թափել հայ տների և փողոցներով անցնող հայերի վրա, որի ժամանակ սպանվում են հայերից մէկ գիւղացի, մէկ կառապան և մէկ հիւսն։ Թաղամանլա կոչված հայկական թաղում կօզակներն սպանեցին քաջ երիտասարդ Մուշեղին, որի մեղքը կայանում է նրանում, որ թոյլ չէր տալիս Թուրքերին ներս խուժել այդ թաղը։

Կէսօրվայ դէմ շրջակայ Թուրք գիւղերից սկսեցին զինված խմբեր դիմել քաղաք իրանց հաւատակիցներին օգնութեան։ Կօզակներին աջողվեց նրանցից մօտ 20 հոգու բռնել, որոնց զինաթափ անելով բանտարկեցին։

Հայերից սպանված են ընդամենը 5 հոգի և թեթև վիրաւորված 4 հոգի։ Սպանված Թուրքերից առ այժմ երևան են եկել միայն 6 հոգի. բայց ականատեսների պատմելով՝ նրանց թիւը 30-ից անցնում է, որովհետև նրանք իրանց սպանվածներին փախցնում են. վիրաւորված են 15 հոգի։ Բացի Հասան էֆենդուց բոլորն էլ զինուորների և կօզակների ձեռքով են սպանվել։

Գովելի էր գնդապետ Սկլեարևսկու գործունէութիւնը և աչալրջութիւնը, որ հրացանաձգութիւն սկսվելու պէս անմիջապէս զօրքեր հանեց և սոսկալի արիւնհեղութեան առաջն առաւ։ Եթէ նա չը լինէր՝ ընդհարումները կը գերազանցէին անցեալ տարվայ ընդհարումները։

Այդ օրը Հաջի Միր-Աբասի պահանջմամբ խուզարկեցին մի քանի հայերի խանութներ, որտեղից հայերը իբր թէ կրակ են բացել Թուրքերի վրա։ Բայց խուզարկութիւնն ապարդիւն անցաւ։ Զարմանալի բան է, հայերից տասնեակներով վիրաւորվածներ և սպանվածներ են լինում, բայց աչքի ընկնող հայերից ոչ ոք չէ միջամտում, նոյնպէս Հաջի Միր-Աբասը, որ տեղական Թուրքերից ամենահարուստը և ամենապատուաւորն է և որի մի խօսքը միայն կարող է զսպել Թուրք ջանբէգարների կատաղութիւնը։

Ամսիս 9-ին առաւօտեան ժամի 4½-ին Թուրքերը յարձակվեցին Կոնդի հայ տների վրա։ Յարձակումը յետ մղվեց մինչև որ վրա հասան զինուորները և խուզարկելով Թուրքերի տները՝ բռնեցին նրանցից 7 հոգի և բանտարկեցին։

Ժամի առաւօտեան 6-ից Թուրքերը Աստաֆեան փողոցի վրա եղած դիրքից գնդակ թափելով անցնողների վրա, երթևեկութիւնը կտրեցին։ Կօզակները և զինուորները վրա հասնելով՝ գնդակի կապեցին այդ տունը, որի ժամանակ սպանվեց տանտէրը և տանը հրդեհ ընկաւ, սակայն իսկոյն հանգցրին։ Դիրքում եղած ջանբէգարներից բռնվեց մէկ հոգի, իսկ մնացածները փախան։

Երեկոյեան ժամի 7-ին Թուրքերը Դամրբուլաղից յարձակվեցին Շհար կոչված հայկական թաղի վրա, աշխատելով ներս խուժել տները. ընդդիմադրեցին հայերը մինչև հասան կօզակները և զինուորները։ Թուրք ջանբէգարները սկսեցին կարկտի պէս գնդակ թափել նրանց վրա. մանաւանդ սաստիկ էր վերոյիշեալ Միր-Աբասի և նրա եղբայր Միր Բաղրի տներից տեղացող կրակը։ Կօզակները և զինուորները երկարատև զալլերից յետոյ հազիւ կարողացան լռեցնել նրանց և ապա դռները կոտրելով ներս մտան տները, սակայն մարդ չը գտնելով փչացրեցին տան կահկարասիները։

Հօր փորողը հօրի մէջ ընկաւ. նա խուզարկել էր տալիս հայերի խանութները, ինքը տան մէջ ջանբէգարների վոհմակներ է պահում և կառավարչական զօրքերին ընդդիմադրում։

Միր-Աբասի և եղբօր տների աւերվելը խելքի բերեց Թուրքերին։ Նրանք կարծես զգում են, որ կառավարութիւնը նրանց հանաքները այլ ևս չէ կարող տանել։

Գիշերը հանդարտ անցաւ։ Ամսիս 10-ին երեկոյեան ժամի 6-ին Կոնդում Թուրքերը կրակ բացին Մելիք-Աղամալեանների տան վրա, բայց զինուորները և կօզակները ժամանելով անցքի տեղը Թուրքերի դիրքերը գնդակի կապեցին, որի ժամանակ նրանցից սպանվեցին 4 հոգի։

Դրութիւնը ընդհանրապէս կրիտիքական է, որովհետև Թուրքերը շատ լաւ պատրաստված են և դրսից օգնութիւն ստացած լինելով ամեն բանից երևում է, որ հանդարտվող չեն, չը նայելով՝ որ կառավարութիւնը անկողմնապահ միջոցների է դիմում։ Նոր ընդհարումն սպասվում է։

Բոլոր խանութները փակ են. շուկայում մարդ չը կայ. երթևեկութիւնը դատարի հետ կտրվել է։

Յ. Վարդանեան

ԳԻՒՂԱԿԱՆ ՑԱՒԵՐԻՑ

Երևոյթ է, անձրևի մեծ պակասութիւն է զգացվում, բայց մարդկային խելքի հանճարը այս չարիքի առաջն առաւ, անձրևի փոխարէն արիւնով են ոռոգում դաշտերն, լեռներն, անտառներն ու հովիտները։ Գազանները նորից իրանց որջերից դուրս թափեցին և հայերի անմեղ արիւնը հոսեցրին։ Հայերին այս դեռ քիչ է, հայերի հաւատալը իրանց կորստեան է մատնում. Ո՞ւր ես գնում հայ աշխատաւոր, մի՞թէ դու չը խրատվեցիր անցեալներից, տանի որ կեանքի և գոյքի ապահովութիւն չը կայ, ինչո՞ւ ես քո տանից հեռանում, ո՞վ է քո ձնտանիքի պահպանողը... Ո՞ւմ համար ես աշխատանքի գնում, ո՞վ կերաշխաւորվի, որ դու վաղը կենդանի կը մնաս...

Պ. Լէվիցկին մեր գաւառում խաղաղութիւն զգեց. սրա օրով յանցաւորները իրանց արժանի պատիժները ստանում էին. բայց չար մարդկանցը դուր չեկաւ պ. Լէվիցկին, ուրիշ գաւառների նման յանցաւորներին չէր պաշտպանում, իսկ արդարներին պատժում. յարգելի գեներալի կրծքի տակ խիղճ կար և ոչ թէ մի կտոր քար. բայց խղճով պաշտօնեայ մի՞թէ երկար կ՚ը թողնեն մի տեղ, ոչ. դա հակառակ է պետական շահերին, վնասակար է աւազակների գոյութեան. Ուժ խօսքով հեռացրին ամենքին սիրելի Արնօլդին, եթէ նրան իրաւունք տային և մի փոքր էլ ոյժ, մեր գաւառում մի ուլի ականջ չէր վիրաւորվի, բայց ապալարների և բէգերի խօսքով հեռացրին այն ազնիւ մարդուն և մեր գաւառը դժոխք դարձրին։ Մի փոքր շունչ էր քաշել մեր գաւառը պ. Լեվիցկու շնորհիւ. նրան էլ հեռացրին։ Պ. Ռէնսոնին էլ դատապարտել են մէկ ամսվայ բանտարկութեան նրա համար, որ վերջինիս ստրաժնիկները ծեծել են գողերին և մարդասպաններին իշխանութեան հրամանները չը կատարելու համար։ Ո՛րքան է մարդկութիւնը բարոյապէս ընկել, այլասեռվել. բա ինչ պատիժ պէտք է տան միջնորդ հաշտարար Երմօլայեվին, գաւառապետ Ֆրէյլիխին և ընկ. որոնք տասնեակ գիւղերի հայերին դժբաղդացրին, 70 տարեկան պառաւ կանանցը և օրիորդներին բռնաբարեցին, ամբողջ ազգի «սրբութիւն սրբոցը» ոտի տակ տուին. ամենքն էլ իրանց սլաքները ուղղել են հայութեան վրա, ամենքն էլ նրան վիրաւորում են, բայց մէկը չը կայ, որ սպեղանի դնէ վէրքերի վրա. մտածիր հայ ժողովուրդ, թէ ինչ հանգամանքներում են ապրել քո նախահայրերը և ինչպէս են իրանց պապերի կապը կատարել. կատարիր և դու քո պարտականութիւնը, մի յուսահատվիր, դժբաղդութիւնները, հալածանքը քեզ աւելի ամրացնում է, քո միջից ստրկութիւնը վերացնում. մեզ դրսից օգնութիւն չի հարկաւոր, մեր քոյրերի և մայրերի օգնութիւնը, նրանց սփոփիչ խօսքերը մեզ աւելի ոյժ, հաւանք կը տան, քան թնդանօթները։

Թուրքերի ամբարտութեանը սահման չը կայ, երբ յարմար րօպէ է գտնում հայերից բռնում անյայտացնում է, յօշոտում է արիւնարբու գազանի նման։ Տեսէք որքան մեծահոգութիւն է ցոյց տալիս հայը Թուրքին. անցնում են իրանց քոչերով հայ գիւղերի, արտերի, արօտատեղիների միջով, բայց մազաչափ վնաս չէ տալիս Թուրքին, հայն ազնուութեամբ պահպանում է իր խօսքը. եթէ Թուրքերը լինէին հայերի տեղը, Թուրքերի մի մասը հիմա կոտորված, տաւարն ու ոչխարը քշված կը լինէին. անցնում են Թուրքերը զինված, ոչ ոք նրանց ոչինչ չէ ասում, բայց հայ գիւղացուն իր գիւղի մօտը բռնում և այնքան են ծեծում, որ արիւնոտ մարդը անշնչացած գետին է ընկնում. ծեծից նրա մարմինը ամբողջ շաբաթ կապտին էր տալիս. մի՞թէ սա արդարութիւն է. մի՞թէ սա օրէնքը ոտի տակ տալ չէ նշանակում, հարիւրներով տուգանք են վերցնում, իրան ծեծում, հրացանն էլ խլում. եթէ ամենքին էլ հաւասարապէս դատէին, այդ մեզ համար ցաւ չէր լինի, բայց երբ աւազակին, գողին պաշտպանում են, իսկ արդարին, անմեղին հալածում, դա արդէն մարդու համբերութեան սահմանից հանում է։

Եւլախի ճանապարհի դէպքերը մեր գաւառում վատ տպաւորութիւն գործեցին. եթէ մեր գաւառում չը լինի Լէվիցկին կամ նրա նմանը, Եւլախի դէպքերը այստեղ ևս կը կրկնվեն։ Թուրքերի հունձը սկսվել է, բայց հնձողները հայերն են և երկիւղից չեն գնում. Թուրքին հաւատալը շատ դժուարացել է, նա ամեն քայլափոխում հային խաբում է։ Թուրքերը երկիւղով են սարը քոչում. նրանք կարծում են որ հայերն էլ իրանց նման ուխտադրուժ են. քանի-քանի անգամ Թուրքերի հովիւներն հայերի առաջը կտրել և հարցրել են.—«հայ, դու քո դինը, մասաբը, ճշմարիտն ասա, մեզ սարում կոտորելու էք թէ ոչ, գնանք թէ ետ դառնանք»։ Մենք Թուրքերին բացատրում ենք խռովութիւնների կորստաբեր լինելը, որոնցից թէ տնտեսականապէս և թէ բարոյապէս քայքայվում են երկու ազգութիւններն ևս և որոնցից ոչ մի շահ չը կայ. բայց Թուրքերը փոխանակ զգջալու, սպառնում են թէ երբ սարերից վերադառնան՝ հայերի վերջն է։

Եթէ նշանակէին անկաշառ, անաչառ պաշտօնեաներ, երկիրը կը խաղաղվէր։ Թուրքերի մէջ մեծ շչուկներ կան, որոնք ռուս-Թուրքական ընդհարումը անխուսափելի են համարում, և այնպէս են պատճառաբանում, թէ եապօնացիք յաղթեցին ռուսներին, տաճիկներն էլ կը յաղթեն. ողորմելի դատողութիւն։ Փորձեցէք։

Կովկասի հայութեան երկուանքն է. ոյժ է հարկաւոր ներկայումս մեզ և ոչ կուսակցութիւնների բաժանվել և միմեանց հայհոյել։

Մելքիսեդէկ քահանայ

Բաղանիս

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲԱՑՈՒՄԸ

Յունիսի 11-ին, երեկոյեան ժամը 7-ին, գիւղատնտեսական ընկերութեան դահլիճում կայացաւ Ազգագրական Հրատարակչական Ընկերութեան ընդհանուր ժողովը, որի գլխաւոր առարկան կազմում էր Ազգագրական Հրատարակչական Ընկերութեան փակումը և մի նոր համակրելի ընկերութեան Հայոց Ազգագրական Ընկերութեան բացումը։

Բացի դրանից ընդհանուր ժողովը պէտք է լսէր Ազգագրական Հրատարակչական Ընկերութեան վարչութեան զեկուցումը այդ ընկերութեան գոյքերի և դրամագլխի մասին, որին պէտք է հետևէր նոր կազմելիք Հայոց Ազգագրական Ընկերութեան գործադիր և պատուաւոր անդամների, ինչպէս և բոլոր պաշտօնավոր անձերի ընտրութիւնը։

Ընդհանուր ժողովը բացեց Ազգագրական Հրատարակչական Ընկերութեան վարչութեան նախագահ պ. Ա. Մելիք-Ազարեանը, որ խնդրեց ընտրել ընդհանուր ժողովի նախագահ և քարտուղար։ Ընդհանուր ժողովը միաձայն ընտրեց պ. Ա. Քալանթարին նախագահ, իսկ պ. Յ. Մանդինեանին—քարտուղար։

Նախագահ պ. Ա. Քալանթարը ընդհանուր ժողովին ծանօթացրեց ժողովի գումարման գլխաւոր առարկաների հետ։

Ե. Լալայեան կարդաց վերջին արտակարգ ընդհանուր ժողովի արձանագրութիւնը, որից երևաց, որ Ազգագրական Հրատարակչական Ընկերութեան բաժնետէրերն որոշել են փոխել վերոյիշեալ ընկերութիւնը Հայոց Ազգագրական Ընկերութեան այն պայմանով, որ իրանք դառնան նոյն ընկերութեան մշտական անդամներ, յատկացնելով նրան նոյն ընկերութեան ամբողջ գոյքն ու դրամագլուխը։

Ապա պ. Յ. Ամիրխանեան կարդաց Ազգագրական Հրատարակչական ընկերութեան տնտեսական դրութեան ընդհանուր և ամբողջական հաշիւը, որից պարզվեց, որ այդ ընկերակցութիւնը ներկայումս ունի երրորդ փոխառութեան երկու խաղատոմս, 2358 կտոր գիրք, մօտ 3,500 րուբլու արժողութեամբ, 500 րուբլի ապառիկ և բաւականաչափ կլիշէներ։ Դրանից յետոյ Ազգագրական Հրատարակչական ընկերութեան խմբագրական մասնաժողովի նախագահ պ. Ե. Լալայեան զեկուցեց, որ այդ ընկերութիւնը մինչև այժմ կարողացել է հրատարակել Ազգագրական հանդէսի VII, VIII, IX, X, XI և XII գրքերը և Ախվերդեանի «Հայ աշուղներ», աշխատութիւնը։ Եւ թէև խմբագրական մասնաժողովը գործունէութեան մեծ ծրագրներ էր մշակել, սակայն հայ-Թուրքական ընդհարումները արգելք են հանդիսացել այդ ծրագրի իրագործման։

Պ. Ա. Մելիք-Ազարեանը առաջարկեց Հայոց Ազգագրական ընկերութիւնը դնել Վեհափառ Կաթողիկոսի բարձր հովանաւորութեան ներքոյ, որ ընդունվեց միաձայն և բուռն ծափահարութեամբ։ Յետոյ պ. Մելիք-Ազարեանը շնորհակալութիւն յայտնեց պ. Ե. Լալայեանին նրա երկարատև և տոկուն գիտնական գործունէութեան համար, ազգագրական ուսումնասիրութեան ասպարէզում։

Պ. Ե. Լալայեանն էլ իր կողմից շնորհակալութիւն յայտնեց վարչութեան և խմբագրական մասնաժողովին, որոնց աջակցութեամբ և քաջալերութեամբ կարողացել է իր փայփայած գաղափարը մասամբ իրականացնել. ընդհանուր գծերով ծրագրեց նոր ընկերութեան ապագայ գործունէութիւնը։

Սրանից յետոյ տեղի ունեցան հայոց ազգագրական ընկերութեան պաշտօնավոր անձերի ընտրութիւնը։

Գաղտնի քուէարկութեամբ ընտրվեցին ընկերութեան խորհրդի նախագահ՝ պ. Ա. Մելիք-Ազարեան (30 սպիտակ), փոխ-նախագահ՝ տիկին Հ. Մարտիրոսեան (38 սպ.), Գանձապահ՝ պ. Ա. Սարուխանեան (36 սպ. 2 սև)։

Խորհրդի անդամներ Մ. Խունունց (33 սպ. 5 սև), տիկ. Ն. Նունուֆարեան (29 սպ. 9 սև), երաժիշտ Տէր-Դաւթեան, (29 սպ. 9 սև). Անձնափոխանորդներ՝ Ե. Ծատուրեան (27 սպ. 11 սև) և ճարտարապետ Խ. Տէր Սարգսեան (27 սպ. 11 սև)։

Խմբագրական մասնաժողովի նախագահ ընտրվեց պ. Ե. Լալայեան (38 սպ.)։ Անդամներ՝ Յ. Մանանդեան (36 սպ. 1 սև), Լ. Բաբայեան (35 սպ. 2 սև), Ա. Աթանասեան (35 սպ. 2 սև), Ա. Եզեկեան (29 սպ. 8 սև), Մ. Գէորգեան (28 սպ. 8 սև)։ Խմբագրական մասնաժողովի անձնափոխանորդներ ընտրվեցին Մ. Յովհաննիսեան (28 սպ. 9 սև), Խ. Սամուէլեան (28 սպ. 9 սև)։

Վերստուգող յանձնաժողովի անդամներ՝ Ս. Խարազեան (32 սպ. 5 սև), Կ. Շիրինեան (32 սպ. 5 սև), Յ. Ստեփանեան (32 սպ. 5 սև)։

Ընտրութիւնները կատարելուց յետոյ նախագահ պ. Ա. Քալանթարը նորակազմ ընկերութեան կատարեալ յաջողութիւն և օգտաւէտ ու արդիւնաւէտ գործունէութիւն բարեմաղթելով փակեց նիստը։

Լ. Բ.

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

—Պետերբուրգում յունիսի 5-ին, գործադուլ արեցին Շվէյտերի բանուորները։ Պահանջները տնտեսական են։ Նոյն օրը տնտեսական պահանջներ են արել ու գործադուլ արել Վէյերմանի գործարանի ծառայողները։ Ուլեայի տպարանում երկրորդ շաբաթն է, որ շարունակվում է գործադուլը։ Բօյկօտ է յայտարարված նրան։ Տպարանատէրը ոչ մի բանակցութիւն չէ ընդունում։ Զարխիի տպարանում և կազմարարութեան արհեստանոցում լիակատար գործադուլ է։ Պահանջները տնտեսական են։ Տէրը համաձայն է մասնակի զիջումներ անելու. բանուորները հաստատ են կանգնել իրանց ծրագրի վրա։ Կիրիլովի գործարանում 4-րդ շաբաթն է որ տեւում է գործադուլը զուտ տնտեսական հողի վրա։ Կիրիլովը ընդունում է բոլոր պահանջները, բայց հրաժարվում է վճարել գործադուլի օրերի համար։ Յունիսի 5-ից գործադուլ են արել նոյնպէս լեհական և հրէական բոլոր հացի փռուերի վարպետները։ Խոշոր տէրերը հնազանդվեցին գործադուլին, բայց հաշիւները չը տուեցին։ Ինչպէս հաղորդում են գործադուլ անողները, նրանց մտադիր են աջակցել մանր խանութների հացթուխները, որոնք յայտնել են իրանց տէրերին, որ իրանց վիճակը աչնչով լաւ չէ իրանց գործադուլ անող ընկերների վիճակից։ Գործադուլ անողների թիւը 3 հազար հոգուց աւելի է միմիայն Պետերբուրգի մէջ։ Հացի փութը ծախվում է 6 կօպէկով։ Մայրաքաղաքը բուլկի է ստանում Վիբօրգից, Նովգօրօդից, Պսկովից, Ռէվելից, Ռիգայից, նոյնպէս և Մոսկվայից։

—Նիկօլաեվսկի երկաթուղու մեքենավարների մէջ խլրտումներ են ծագել։ Պատճառը երկաթուղային ծառայողների կենցաղը բարելաւելու համար մինիստրութեան կողմից յատկացված յաւելման գումարի անհաւասար բաժանումն է։ Մեքենավարները մի պատգամաւորութիւն են ուղարկել իրանց վարչութեան մօտ և պահանջում են յաւելման ռոճիկի համար յատկացված փողերը յաւասարապէս բաժանել թէ բարձր և թէ ստորին պաշտօնեաների մէջ, հակառակ դէպքում յունիսի 7 ին մտադիր են գործադուլ յայտարարելու։ «Нов. Вр.»

—Պետերբուրգի քաղաքային ծառայութեան մէջ գտնվող բանուորները, քարտաշները, ջրմուղի վրա բանողները և այլն, թողին աշխատանքները, գործադուլ արին մինչև որ իրանց տնտեսական պահանջներին բաւարարութիւն կը տրվին։ «Бир. Вѣд.»

—Լօձում փակվել են դերձաւի խանութները ծառայողների գործադուլի պատճառով։ Ալլերտի գործարանում գործադուլ են արել 60 բանուորներ։

—Վերջին օրերս ոստիկանական դեպարտամենտը ստանում է անհգին քանակութեամբ զեկուցումներ ագրարական անկարգութիւնների մասին։ Շարունակ, անընդհատ հեռագիրներ են փոխանակվում նահանգապետների մէջ, որ հասնում է մինչև 6 հազար բառի։ «Дума»

—Վօրօնէժից Голосъ-ին հեռագրում են. Անհանգստացուցիչ տեղեկութիւններ են ստացվել, որ ագրարական շարժումներ են սկսվել Վօրօնէժի գաւառում։ Բօրրօվսկու գաւառում Մօկօվօ գիւղի գիւղացիները ոչնչացնում ու փչացնում են կալուածատէր Ստանկէվիչի ցանքսերը։ Կօզակներ են ուղարկվել, որոնք անգթութիւններով պատժում են գիւղացիներին։

—Սումից տեղեկութիւն է ստացել «Р. В.»-ն, որ Բօրշչինսկու տնտեսութեան մէջ հարևան գիւղերի գիւղացիները անկարգութիւններ են կատարել։ Ստանօվօյը պահակների խմբով ստիպված է հրացանաձգութեամբ փախչել։ Երկուսը սպանված են, մէկը վիրաւորված։ Դրագուններ են պահանջվել։ Բացի այդ՝ ագրարական շարժումներ են սկսվել Կօստրօմի, Տվերի, Չերնիգօվի, Կիէվի, Տուլայի, Սարատովի և Տամբօվի նահանգներում։

ԲԷԼՕՍՏՕԿԻ ՋԱՐԴԸ

«Дума» լրագրի թղթակիցը հաղորդում է հետևեալ դէպքի մանրամասնութիւնը, որ բնորոշում է Բէլօստօկի պաշտօնական շրջանների տրամադրութիւնը։ Իգական գիմնազիայում գտնվում էին աշակերտուհիները։ Երբ սկսվեց ջարդը, նրանք վախենում էին փողոց դուրս գալ։ Վերատեսուչ Դօբրօվօլսկին ցանկութիւն յայտնեց նրանց առաջնորդել։ Երբ այդ առաջարկութիւնից ուզում էին օգտուել նաև հրէայ աշակերտուհիները, վերատեսուչը ասաց նրանց, որ նա հրէուհիների հետ չէ ուզում գնալ և դուրս գնաց քրիստոնեուհիների հետ, թողնելով հրէայ աղջիկներին ճակատագրի բաղդին, հարբած, անկարգութիւններ կատարող աղամարդկանց ամբոխից ոչ հեռու։ Մի այդպիսի բան էլ տեղի ունեցաւ արական առևտրական դպրոցում։ Հանդիսաւոր ակտի համար հաւաքվել էին աշակերտները և չէին կարողանում դուրս գնալ։ Լուր տարածվեց, որ խուլիգանները ուզում են կոտորել կօմմերսանտներին (առևտրական դպրոցի աշակերտներին)։ Տեսուչը հեռախօսով յայտնեց ոստիկանութեանը և խնդրեց պահակ ուղարկել։ Պատասխանը ստացվեց. «Հրէական ուսումնարանի համար ես պահակներ չունեմ»։ «Дума»

«Голосъ»-ի թղթակիցը յունիսի 4-ին հաղորդում է. Զինուորական դրութիւն է։ Գիշերը, ինչպէս պարզվեց, զինուորները գնդակահարել են Կօնտօրօվիչի և ուրիշ տներ։ Իբրև թէ այնտեղից գնդակ են արձակել։ Այս րօպէիս քաղաքում շրջագայում են պահակները։ Լուր կայ, որ երկաթուղու կայարանում ջարդը վերսկսվել է, որ արուարձաններում արդէն սպանութիւններ են կատարւում։ Այն հիւրանոցը, ուր պրօֆ. Շչէպկինը և մենք իջևանել ենք, պաշարված է տասնեակ թալանվածներով ու ջարդերին ականատես վկաներով, որոնք հաւաքվել են ցուցմունքներ տալու։ Նախագաւթում, հեկեկանքները, աղերսները ու պատմութիւնները յաջորդում են իրար, մէկը միւսից աւելի սարսափելի։ Ահա զինուոր Ս-ի պատմութիւնը, որ եկել էր ցուցմունքներ տալու. «Չորեքշաբթի օրը ինձ մօտ եկաւ շտապով իմ ընկեր, Կազանսկի գնդի մի զինուոր և լալով յայտնեց. եղբայր հեռացիր այստեղից, պէտք է կոտորեն հրէաներին։ Երեկ մեր գնդի գնդապետը հաւաքեց մեր վաշտը և ասաց. դժբաղդ զինուորներ, ինչպիսի ժամանակներում ենք ապրում մենք այժմ։ Նրա համար, որ մենք պաշտպանում ենք մեր Թագաւորին, հայրենիքը և ամբողջ Ռուսաստանը, մեզ սպանում են։ Ես պէտք է ասեմ ձեզ, որ նորերս բռնել են հրէա-յեղափոխականի և նրա մօտ գտել են մի նամակ, որտեղ ասված է. որովհետև հրէաները մեզ հետ պատերազմել չեն կարող, ուստի նրանք և վճռել են մեզ հատ-հատ կոտորել։ Եւ ահա երկու զինուորի այս շաբաթվայ ընթացքում մորթել են (հասարակական տան մէջ), իսկ երկու շաբաթ սրանից առաջ, ջարդը սկսված օրը մայիսի 21-ին վիրաւորվեցին 7-ին։ Ահա դրա համար էլ եղբայրներ, մինչև ամսի 8-ը կարող էք դուք հրէաների հետ վարվել ինչպէս ուզենաք։ Դա-Բարձրագոյն իշխանութեան կարգադրութեամբ է թոյլատրվում»։

Das Leben-ի թղթակիցը Բէլօստօկից հաղորդում է. «Ջարդերի հեղինակները բռնաբարում էին կանանց։ Նրանցից մի քանիսները բռնաբարվելուց յետոյ վերնասրահներից փողոց էին ձգվում, պատառոտված որովայններով»։

ՆՈՐ ՀԱՐԿԵՐԻ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

Ժողովրդի ներկայացուցիչների կողմից մերժված, կրկին ատելի դարձած և ամբողջ քաղաքակիրթ աշխարհի զզուանքին ու արհամարհանքին արժանացած Գօրեմիկինի մինիստրութիւնն անունը կրող յետադէմների խմբակը, տեսնելով որ, միմիայն պրօվօկացիաներ ու պօգրօմներ սարքելով և մահվան պատիժներ ստորագրելով, շատ հեռու չէ կարելի գնալ, մտածել է ինքն էլ օրինագծեր ներկայացնել Պետական Դումայի քննութեանը։ Եւ որովհետև բիւրօկրատիայի ամբողջ ուշքն ու միտքը միմիայն փողի շուրջն է պտտում, նա միմիայն իր և իր. արբանեակների ռոճիկները ապահովելու մասին է մտածում, ուստի նրա օրինագծերն էլ միշտ մի որ և է նոր հարկ աւելացնելու խնդրին են վերաբերում։

Ժողովուրդը քաղցից կոտորվում է, ամբողջ նահանգներ սովի են մատնված, երկրի տնտեսութիւնը քայքայվել և օրէ օր վրա քայքայվում է, արդիւնագործութիւնը կանգ է առել ամեն տեղ, հարիւրաւոր գործարաններ փակված են, տասնեակ հազարաւոր բանուորներ փողոցն են նետված, յուսահատ ժողովուրդը վայրենացել, գազանացել է և աւազակութիւններով, գողութիւններով ու մարդասպանութիւններով է պարապում. մարդիկ ամեն տեղ վախից կորցրել են իրանց քունն ու ախորժակը, չիմանալով, թէ ուր գնալ, ուր փախչել, որպէս զի կարելի լինի ազատվել վերջին ծայր յանդգնութեան հասած չարագործներից, իբրև այսպիսի ողբալի կացութեան ժամանակ, ասում ենք, մեր անխիղճ և անամօթ բիւրօկրատները դեռ էլի միմիայն նոր հարկեր աւելացնելու մասին են մտածում։

Այն բոլորը, ինչ որ կատարվում է ամբողջ Ռուսաստանում,—Սպիտակ ծովից սկսած մինչև Արաքսի ափերը և Խաղաղ ովկիանոսից սկսած մինչև Դվինայի ափերը,—և որոնց իսկական պատճառն ու ստեղծողը հէնց ինքը բիւրօկրատիան եղաւ, զբաղեցնում են նրան միմիայն այն չափով, որ չափով որ դրանք կարող են իրանց դրամին, իրանց ռոճիկներին վերաբերվել։ Եւ ահա, այդ միակ մտահոգութիւնից դրդված, Գօրեմիկին-Ստոլիպինեան մասոնները ճակատներին են դրել, օրերով մտածել, խելքներին զոռ տուել, թէ ինչպէս անել, նոր գումարներ գտնելու համար, ինչ ճանապարհով և ինչ միջոցներով կարելի պիտի լինի քաղցած ժողովրդից էլի մի քանի տասնեակ միլիօններ դուրս քաշել։

Երկար սրտամաշ մտածմունքներից յետոյ «էվրիկա» (գտայ), բացականչել են մեր հնարագէտ մինիստրները և մշակել են մի, թէև իբր նոր, բայց էապէս չափազանց հին օրինագիծ, որ մտադիր են շուտով Պետ. Դումայի քննութեանը առաջարկել, երբ, իբր, և պաֆօսով նրանք կասեն.—«տեսէք, մենք էլ գիտենք օրինագծեր մշակել»։

Ամենքն էլ, անշուշտ, հետաքրքրվում են, թէ այդ ինչ նոր օրինագիծ է։ Օհ, դա այնպիսի մի սովորական և բանալ բան է։ Եւ ինչպէս չէ էլ կարելի բիւրօկրատիայից մի օրիգինալ՝ բան սպասել։ Գօրեմիկինի այսպէս կոչված մինիստրութիւնը պարզապէս պէտք է առաջարկել, որ թութունի և մախորկայի ակցիզը աւելացվի և նոր ակցիզ նշանակվի էլեկտրականութեան և գազի համար...

Ինչպէս տեսնում էք, մենք մի քիչ սխալվեցինք, ասելով, թէ բիւրօկրատիան անընդունակ է օրիգինալ՝ բան ասելու՝ մինչդեռ էլեկտրականութեան և գազի համար ակցիզ նշանակելը մի կատարեալ նորութիւն է Ռուսաստանի համար։ Սակայն, բանն էլ հէնց նրանումն է, որ ակցիզի անուան տակ վերցրված հարկերը,—լինի դա ծխախոտի, օղիի, շաքարի թէ էլեկտրականութեան համար այդ միևնոյն է,—կոչվում են կողմնակի հարկեր և այնչափ շատ ու առատ են, որ երբեք նորութիւն չեն կարող համարվել։

Պետական Դուման կառավարութեանը ներկայացրած իր ծրագրում արդէն յայտնել էր, թէ ինքը մտածում է վերացնել կողմնակի հարկերը, որոնք ամենից շատ, եթէ չասենք ամբողջապէս, ծանրանում են չքաւոր դասակարգերի վրա, փոխարինելով նրանց ուղղակի հարկերով, ինչ ամենից արդար և խելացին է համարվում ամեն մի, ժողովրդի մեծամասնութեան շահերի մասին մտածող, պետութեան համար։ Իսկ Գօրեմիկին-Ստոլիպինը, կարծես թէ Պետ. Դումայի ձգտումներն ու ծրագիրը արհամարհելու համար, ցանկանում է դեռ էլի նոր կողմնակի հարկեր աւելացնելու առաջարկ մտցնել։

Կընդունի՞ արդեօք Պետ. Դուման իր ծրագրով մերժված սկզբունքի համաձայն կազմված օրինագիծը, և նմանապէս այն որ դրա առաջարկողը այն մինիստրութիւնն է, որին ամեն օր Պետ. Դուման դռան շէմքն է ցոյց տալիս։ Մենք չենք ենթադրում։ Կարծում ենք, որ Գօրեմիկինն էլ մեծ յոյսեր չէ կարող ունենալ այդ մասին, բայց և այնպէս բիւրօկրատիայի ռոճիկները ապահովելու խնդիրը նրան այնչափ մեծ հոգս է պատճառում, որ նա ջանք չը պիտի խնայի իր օրինագիծը անցկացնել, եթէ միայն... իր տեղում երկար մնայ։

Խ.—Ազատ

ՄԻՆԻՍՏՐԱԿԱՆ «SANS GÊNE»

«Times» լրագրի Պետերբուրգի թղթակիցը խօսակցութիւն է ունեցել Գօրեմիկինի կաբինետի անդամներից մէկի հետ (թէ որի հետ, այդ նա չէ հաղորդում) կառավարութեան վերաբերմունքի մասին դէպի Դուման։ «Մինիստրի արած յայտարարութիւնները,—ասում է թղթակիցը,—ինչպէս ոչ մի նորութիւն չէ մտցնում այն կօնֆլիկտի մէջ, որը տեղի է ունենում կառավարութեան և Դումայի մէջ, բայց նրանք աւելորդ անգամ լոյս են սփռում բիւրօկրատիայի և ժողովրդական ներկայացուցիչների հայեացքների խիստ տարբերութեան վրա, որը աններելի է դարձնում որ և է փոխադարձ համաձայնութիւն կայացնել նրանց մէջ»։ Մինիստրի խօսքերի բովանդակութիւնը առաջ է բերվում այնքան ճիշդ կերպով, որքան որ թղթակիցը կարող էր անել այդ։

«Times»-ի ընթերցողները,—ասեց մինիստրը, հիմնում են իրանց կարծիքը Ռուսաստանի ներքին դրութեան մասին կեղծ նմանութեան վրա։ Նրանք կարծում են, որ Դուման պարլամենտ է, և այդ պատճառով կառավարութեան վերաբերմունքը դէպի Դուման նրանց զարմանք է պատճառում։ Իրականութիւնը այս է, որ Դուման և պարլամենտը ամենևին միևնոյն բանը չեն, ես, աւելին կասեմ դեռ, որ Դուման ուղղակի յեղափոխական մի կազմակերպութիւն է, բանուորական պատգամաւորների խորհրդի կամ միութիւնների միութեան նման մի բան։ Ես այդ ասում եմ, ոչ թէ այն պատճառով, որ Դուման կառավարութեան հակառակ դիրք բռնել. դիմադրական եմ եղել երբեմն ես նոյնպէս. այլ նրա համար, որ Դումայի օպօզիցիան կրում է մի այլ տեսակ, զուտ յեղափոխական բնաւորութիւն։ Միթէ կարելի՞ է ուրիշ կերպ բացատրել նրա մերժումը դաշնակցել քաղաքական յանցանքները դատապարտող բանաձեւը, կամ նրա ագրարական ծրագիրները, կամ նրա պահանջը ընդհանուր ամնիստիա և մահվան պատժի վերացումը։ Ես կարծում եմ, որ Դուման այդպիսի դիրք բռնելով յիշեալ հարցերի վերաբերմամբ, երևան հանեց թէ իր յեղափոխական ծագումը և թէ իր յեղափոխական նպատակները և դրա շնորհիւ էլ խախտեց իր նշանակութիւնը միևնոյն ժամանակ պատճառելով սակաւ չարիք։

Դուման մեծ նմանութիւն ունի կոմս Վիտտէի հետ. Նրան մէջ կարելի է քաշել շատ զիլի զուգահեռական գիծ։ Վիտտէին իշխանութեան բարձրութեան հասցրեց յեղափոխական ալիքների ծփանքը, և նա արեց այն բոլորը, ինչ որ կախված էր իրանից, այդ ալիքների բարձրանալուն նպաստելու համար։ Նա դրդեց Կուտլերին մշակելու ագրարական բարենորոգութեան ծրագիրը՝ գրաւման հիմունքներով։ Ճշմարիտ է, յետոյ նա ինքն էլ Կուտլերի պաշտօնազրկութեան պատճառ դարձաւ, բայց այդ գրաւման գժբաղդ միտքը թափանցեց գիւղերի մէջ և առաջ բերաւ վտանգաւոր խլրտումներ։ Տգէտ գիւղացիները վճռեցին իրանց հասարակ խելքով, որ հողը գոյութիւն ունի միայն նրա համար, որպէս զի պահանջեն ու խլեն, և այժմ մենք տեսնում ենք այդ բոլորի հետևանքը։ Բայց կոմս Վիտտէի գործունէութեան պսակն է կազմում նրա ընտրողական օրէնքը, որի շնորհիւ այժմ մենք ունենք յեղափոխական Դումա։ Համարեա մի և նոյն հետեւանքները կը ստացվէին, եթէ որ մտցրված լինէր ընդհանուր ձայնատւութիւնը։ Յաջողութեան հերոսը արդէն տուժեց այն չարիքի համար, որը նա գործեց, բայց Դուման շարունակում է նրա գործը նրա կտակած միջոցներով։ Նա նոյնպէս, նրա նման, դիմում է ամբոխի ապօրէն բնազդներին։ Նա դրդում է նրան բռնութիւններ գործելու և նրա վերջն էլ լինելու է անփառունակ, հէնց որ նրա այժմեայ ձգտումները կը սկսեն իրականանալ։ Հազիւ թէ դրան սպասե՞ք կէս տարուց աւելի։ Թոյլ տուէք կասկածել, որ մինչև այդ ժամանակ, կը սկսվի յեղափոխութիւնը կամ ագրարական ապստամբութիւնը։ Ես չեմ կարծում, որ այդ լինի։ Խլրտումների մասին տարածված լուրերը սաստիկ չափազանցացրած են։ Ռուսաց ժողովրդի ստորին շերտերը դեռ ևս չեն մտնվել յեղափոխական փոթորկին, որը վաղ թէ ուշ կը դադարի ինքն իրան։ Ես համաձայն եմ, որ շատ անհրաժեշտ բարենորոգութիւնների իրագործումը անտեղի կերպով յետաձգված է։ Եթէ որ նրանք իրագործված լինէին իր ժամանակին, ինտելլիգենցիան այդքան համբերութիւնից չէր դուրս գալ, ինչպէս որ այժմ է։ Բայց այդ բարենորոգումները այժմ կիրագործվեն և դա կը հանգստացնի յուզմունքները։ Բարենորոգումների մասին խօսելով, ես, ի հարկէ, ի նկատի ունեմ այն բարենորոգումները, որոնք յիշված են մինիստրական ծրագրի մէջ։ Չէ կարող խօսք լինել մահվան պատիժը վերացնելու, ընդհանուր ամնիստիա շնորհելու և մանաւանդ գրաւման սկզբունքի ընդունելութեան մասին։ Համեցէք ինձ մօտ մի կէս տարուց յետոյ, դուք կը տեսնէք, որ իմ մարգարէութիւնները կատարված են արդէն»։ «Страна»

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Յունիսի 9-ին

Նոյեմբերի 18-ին, Գանձակի կոտորածի ժամանակ, անմեղ հայերին ամենից շատ գնդակահար արեց ոստիկանապետ Թիկնապահ ինքը և մի ոստիկան Ասլան-Սօյուն-օղլին։ Վերջինիս յանցանքն ապացուցված է նաև եկեղեցական կայքերը գրաւելու ժամանակ. մեղադրված է, որպէս հայերին գնդակահար անող։ Այս մեղադրանքն իր ժամանակին նահանգական դատարանում իր ցուցմունքով ապացուցեց՝ այն ժամանակվայ ոստիկանապետ Եսաֆէվը, բայց չը նայած դրան, ոստիկանութեան այդ երկու ստորին պաշտօնեաները վայելում են բարձր ոստիկանութեան համակրանքը և հովանաւորութիւնը։ Նրանք շրջում են մեր անիծված քաղաքում և կատարում են ոստիկանութեան ստորին պաշտօնեայի դերը, մէկը զինված մաուզէրի հրացանով, միւսը այնալուի հրացանով։

Տարբերութիւնը նրա մէջն է, որ նրանք իրանց պաշտօնակիցների նման նշանազգեստով (պօգօններով) չեն շրջում քաղաքում, այլ շրջում են առանց պօգօնների, (ասենք նրանց փոխարէն գաւառումս անթիւ Թուրքեր վըխտում են կեղծ պօգօններով)։ Ուշադրութեան արժանին այն է, որ այս մարդիկ յաճախ կառքով շրջում են հայոց մասի փողոցներով մաուզէրի հրացանը կազմ ու պատրաստ ձեռքին, գտակը գլխի պոչին ծուռ դրած, յանդուգն, ցինիկ ու լիրբ հայեացքով. երբ նրանք անցնում են հայոց թաղով, միանգամայն պղտորում են ամբողջ ազգաբնակութեան սիրտը, վրդովում նրանց խաղաղութիւնը ու անդորրութիւնը։ Հայերի բազմաթիւ դիմումները՝ հեռացնել իրանց պաշտօններից այդ հրէշներին, ոչ մի բարեբար հետևանքի չը հասան և նրանք շարունակում են վարել իրանց պաշտօնը, գայթակղեցնելով ամբողջ ժողովրդի միտքը։

Երբ այսպիսի ոստիկանների խնամքին է յանձնված քաղաքի Թուրքաց մասի հսկողութիւնը, մեզ բոլորովին չէ զարմացնում այն, որ երկու օր առաջ ոստիկանութեան քթի տակ, քաղաքիս քննիչի տան չէմքում մի խումբ Թուրքեր բռնում են գանձակեցի Սամսոն Այվազեանին, քաշում բագի խորքը, որտեղ լինում են մի խումբ ֆէսաւոր և փափախաւոր Թուրքեր. բոլորը թափվում են խեղճ պատանու գլխին և որը ձեռքի մահակով, որը ձեռքով ու քարով հարուածներ են հասցնում խեղճ պատանու գլխին, իսկ նրանցից մէկն առաջ գալով՝ դաշոյնը հանած յարձակվում է այդ Աստծու ուղարկած որսի վրա, պահանջում է, որ թողնեն դրա արիւնը թափելու. այդ ժամանակ Սամսոնի հեծկլտանքի ու ձայնի վրա մտնում է պատահմամբ այդ փողոցով անցնող մի ռուս կին, մտնում է Թուրքի բագը և հրաշքով ազատում խեղճ Սամսոնին։

Անցեալ օրը մի Թուրք կառապան, սուտ թէ ճշմարիտ, յայտարարել է Թուրքաց թաղում, որ իբրև ինքն ուզեցել է մի հայից մի լուցկի առնելու և իբր թէ հայը հրաժարվել է ծախելու. Այդ սուտ լուրն ունեցել է իր հետևանքը. ներկայումս նորից բօյկօտ են հրատարակել ամուր հիմքերի վրա և ամեն քայլափոխում ամենախիստ հսկողութիւն է նշանակված, որ կանոնը չը խախտվի և խախտողները ենթարկվում են ջանբեզարների կողմից խիստ պատժի և տուգանքի։

Պէտք է ասած, որ կենսական մթերքներից մի քանի բաներ, ինչպէս կանաչին, մրգեղէնը, վարունգը մեզ մօտ տասն անգամ թանգ են, համեմատած Թուրքաց թաղի գների հետ։ Դրա մէջ յանցաւորը մեր հայերն են։ Ահա ինչպէս։ Քաղաքումս երկու այդպիսի մթերավաճառ պայմանաւորվել են ագարակատէր հայերի հետ, որ բացի իրանցից ուրիշ մթերավաճառի վրա ոչինչ չը ծախեն. իրանք առնում են բոլոր մթերքները և հաստատվել է մի տեսակ մենավաճառութիւն։ Մթերավաճառը է ստեղծել մօնօպօլիա, թանգ գներով առնում է ագարակատիրօջից և թանգ էլ ծախում։ Միւս խանութատէրերն էլ եթէ երբեմն ուսեների միջոցով բազարից մի որ և է մթերք առնում են, հայերի կողմից պարսաւանքի են արժանանում։ Բօյկօտն եթէ ոչ ինչ է—մի տեսակ միջոց է երկու հարևան ազգերին մշտական լարված դրութեան մէջ պահելու, և որքան հնարաւոր է հաշտութիւնից հեռու հեռու խուսափելու... Եւ այդ Թուրք առաջնակարգ ասված դասակարգի բուռն ցանկութիւնն է։

Չը նայած որ մեզ մօտ վաղուց ընտրված են սանիտարական խմբեր, քաղաքի մաքրակցութեան վրա հսկողներ, բայց դրանցից ոչ մէկը չէ մտել դեռ իր դերի մէջ, մինչդեռ բազմաթիւ գործեր ունեն նրանք կատարելու... Մինչև այսօր միսը ծախվում է մեզ մօտ 15 կ. ֆունտը, իսկ Թուրքաց մասում 12 կօպ. Թուրքերը բոլոր մթերքները էժան ծախելու կողմնակից լինելով, դէպի իրանց են գրաւում չէզոք տարրերը, իսկ հայերը կազմում են Թուրքերի հակապատկերը։

Այս բաները չեն հասկանում մեր տգէտ մանրավաճառը, մեր շահասէր մսավաճառը. նրանք խօսք մի արած, աշխատում են մըշտական գները թանգացնել, որը պակաս դժգոհութիւն չէ առաջացնում թէ հայերի և թէ չէզոք ազգերի շրջաններում։

Թուրքերը որպէս զի դէպի իրանց աւելի գրաւեն չէզոք ազգերի համակրութիւնը, մըտածել են հասարակաց մսավաճառանոց բանալ և մշտական հրապարակային գնից էժան գնով բաց թողնել առնողներին։ Այդ հանգամանքն ի նկատի ունենալով մի պարոն, Սիմէօն Ղուլեան ազգանունով, վերջին օրերումս ահագին թիւով ոչխարներ բերեց, առաջարկեց ձեռնտու պայմաններով մեր մսավաճառներին, որպէս զի նրանք էժան գներով միս բաց թողնեն ազգաբնակութեանը։ Քանի օր է նա սկսել է բաց թողնել 13 կօպէկով, և, ինչպէս լսում ենք, վաղվանից բաց է թողնելու 12 կօպէկով։ Մեր մսավաճառները նոր, այսօրվանից սկսեցին իրանք Ղուլեանից մի կօպէկ պակասցնել...

Քանի գիշեր է Թուրքաց մասում կատարվում է խմբովին հրացանաձգութիւն։ Ինչ տրաքոցներ ենք մենք լսում, բայց ում պարտքն է լսելու։ Նա չէ լսում։ Գոնէ մեզ հետ ապրող ռուսները տրաքոցներ չեն լըսում...

Ինչպէս լսեցինք, Թուրքերի և գաւառապետ Աւալեանի միջև սև կատու է անցել. Ներկայումս Թուրքերն շատ անբաւական են նրանից, որ մի Թուրք է թակել։ Լուր է պտտում, որ Աւալեանի դէմ էլ բօյկօտ են արել։ Հայերի հետ հիմա շատ քաղցրաբարոյ է վարվում, կարծես մի ամիս առաջվայ Աւալեանն չէ—ասում են թերահաւատները, հիմա լաւ է, ըլնդում են մի քանիսը, բոլորովին կերպարանափոխվել է, աւելացնում է երկրորդը—և անվերջ գովասանութիւններ։ Ողորմելիք, որ չէք հասկանում, որ Աւալեանի նման մարդիկ միշտ այդպէս են լինում, վաղը մի հայից էլ նեղանալով՝ իր շանթերն ուղղելու է ամբողջ ազգի դէմ։ Այդպիսի պաշտօնեաները ոչ Թուրքին է օգտաւէտ, ոչ հային...

Աւ. Սահակեան

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Յունիսի 5-ին

Ամսիս 3-ին Մոսկվայում ապրող շուշեցիները հետևեալ հեռագիրն ուղարկեցին Շուշի գեներալ Գօլօշչապօվին. «Մենք, Մոսկվայի շուշեցի հայերս և Թուրքերս, ո՞րքան որ վըշտացել էինք, որ ձերդ գերազանցութեանը Թիֆլիս յետ կանչեցին, առաւել ևս ուրախանում ենք, որ ձեզ նշանակել են բարձր պաշտօնով խաղաղացնելու մեր սիրելի տանջված Ղարաբաղը։ Միաձայն աղօթում ենք Ամենաբարձրեալին, որ ամրացնէ ձերդ գերազանցութեան եռանդը արդար ճանապարհի վրա չարաչենգ չէյթանին հեռացնելու և վերանորոգելու այդպէս սաստիկ խախտված աշխատաւոր տարրի խաղաղ կեանքը։ Կեցցէ ճշմարտութիւնը։ Ահարոնեանց, Եղիգարեանց, Սարգսեանց, Իւզբաշեանց, Խանլարով, Ղազեանց, Թաղևև, Աղիմօվ»։

Յոյս ունենք, որ նորին գերազանցութիւնը իր արդար դատաստանով կը խաղաղացնէ չար մարդկանց և կը մաքրէ այն փշոտ ճանապարհը, որը տանում է խաղաղասէր ժողովրդին դէպի զարհուրելի աղէտի գիրկը, քանի որ հայ ժողովուրդը փափագում է նիւթական և բարոյական հանգստութեան և նորմալ կեանքի մէջ մտնելուն։

Շուշեցիներից շատերը անհամբեր սպասում են Շուշի-Եւլախ ճանապարհի բացվելուն, որպէս զի կարողանան յետ դառնալ իրանց ծննդավայրը և վարեն իրանց գործերը։ Այո, ձախորդ հանգամանքները, զրկելով ապրուստի միջոցից, շատերը պատուհասի ճանկերից փախած գնացել են նոյնպէս և ուրիշ քաղաքներ աշխատանքի յուսով, միայն պէտք է յուսալ, որ այդ գնացողները ուրիշ քաղաքներում, զգալով իրանց ժամանակաւոր հիւրեր, ձեռնարկեն այնպիսի գործերի, որոնցից կարելի լինի հեշտ կերպով հեռանալը և վերադառնալով իրանց ծննդավայրը՝ վերանորոգեն քայքայված տնտեսութիւնը։ Այդ բարոյական պարտականութիւնը պէտք է լինի բոլոր վաճառականների, գործարանատէրերի, արհեստաւորների և ամենի համար, որոնք զգալով իրանց ծննդավայրի, այժմ սգաւոր հայրենիքի, դառն վիճակը, վերադառնալով նրա գիրկը կը կենդանացնեն ուժասպառ երկիրը կանոնաւոր տնտեսութեամբ և Ղարաբաղի հարուստ բնութեան շահագործութեամբ։

Ս. Եղիգարեանց

ՄՈՌԱՑՎԱԾ ԱՆԿԻՒՆՆԵՐ

II

Դարաչիչագի սարահարթը իր 52 գիւղ ազգաբնակութեամբ ներկայացնում է, ինչպէս նկատեցինք մեր նախորդ յօդուածում, տնտեսապէս քայքայված մի շրջան։ Բնութիւնը դաժան, դաժան և այն պայմանները, որի մէջ ապրում է նա։

Կար ժամանակ, երբ նա ապրում էր անհամեմատ լաւ վիճակի մէջ, ունէր շատ թէ քիչ լաւ ապրուստ. այդ այն ժամանակն էր, երբ այս աղքատ բնութեան զաւակը յոյսը չէր դրել միմիայն հողագործութեան վրա, այլ նա ունէր աշխատանքի այլ աղբիւրներ։ Նախ քան Ալէքսանդրօպօլ—Երևանեան երկաթուղու գիծը. Թիֆլիս—Երևանեան խճուղին ձգվում էր Դարաչիչագի սարահարթի վրայով։ Այս խճուղին այնքան բանուկ էր, երթևեկութեան և ապրանքների տեղափոխութեան այնպիսի մի ընդարձակ գործ կար, որ այդ շրջանի ազգաբնակութեան եկամուտի մի խոշոր աղբիւր համարվում էր սայլապանութիւնը—բեռնակրութիւնը։ Դաշտային աշխատանքներից դուրս, ազատ ժամանակ, դարաչիչագցին թէև ծանրաքայլ եզներով և դանդաղաշարժ սայլով, այնուամենայնիւ կարողանում էր ամեն մի երթևեկութեան միջոցին—Երևանից մինչև Աղստաֆա կայարանը և հակադարձ—որը տևում էր 10—15 օր, մի սայլի համար ստանալ 15, 20, 25 յաճախ 30 և աւելի րուբլի քրէհ, մի գումար, որը շատ մեծ եկամուտ էր համարվում սակաւապետ գիւղացու համար։ Պէտք է ասած, բեռնակրութեան մէջ շատ աւելի առաջ էին գնացել այս շրջանի մօլօկանները շնորհիւ իրանց յարմարաւոր ֆուրգօնների, շատ աւելի յետ մնացել Թուրքերը տեղուն աշխատանքի անընդունակութեամբ։

Բացի բեռնակրութիւնից աշխատանքի աղբիւր համարվում էր նաև ինքը խճուղին, որի պահպանութեան համար ամառ-ձմեռ շարունակ աշխատում էին հարիւրաւոր մշակներ խիճ կոտրելով, ձիւն մաքրելով և այլ գործեր կատարելով։ Այժմ չը կայ այն եռուն երթևեկութիւնը, չը կան և այն աշխատանքի աղբիւրները։ Ժողովուրդը մնացել է երկրագործութեան և անասնապահութեան յոյսով, բայց թէ այդ երկու պարապմունքները միասին ինչ չափով կարողանում են ազգաբնակութեան անհրաժեշտ կարիքներին բաւարարութիւն տալ, այդ կը տեսնենք ստորև։

Թէ երկրագործութիւնը և թէ անասնապահութիւնը պայմանաւորված են միայն և միայն հողի տեսակի և քանակութեան հետ։ Հողի տեսակի—այլ խօսքով որակի մասին խօսելը Դարաչիչագի շրջանում աւելորդ է, բացի ցորեն ու գարին և մի երկու նման աղքատիկ բոյսերը որ և է հարուստ բոյս չէ կարող աճել այս կլիմայի տակ։ Ինչ վերաբերում է հողի քանակութեանը այդ էլ մի մխիթարական բան չէ ներկայացնում։ Մտէք որ գիւղը կամենաք այս շրջանում, ամեն տեղ նոյնը կը լսէք՝ հող չունենք։ Հող չունենք կը կրկնի ձեզ իւրաքանչիւրը, գիւղի մեծն ու փոքրը և դրանք դատարկ հնչիւններ չեն։ Այդ զոյգ բառերը շատ ընդհանրացած բառեր են, բառեր, որոնք այսօր կրկնվում են Ռուսաստանի մի ծայրից սկսած մինչև միւս ծայրը, բառեր, որոնք այսօր կազմում են վիթխարի Ռուսաստանի վիթխարի շարժման հիմնաքարերը, որոնք եթէ ոչ այսօր անշուշտ՝ վաղը կը կործանեն Ռուսաստանում տիրող ներկայ հիւանդոտ կարգերը—մասսաների արիւն քրտինքի վաստակով խրախճանող բիւրօկրատիայի ստեղծած անարդար ապօրինի կարգերը։

Հող չունենք, ապրուստ չունենք. չը կարծէք թէ սրանք կրկնվում են որպէս մօդա դառած բառեր, ոչ, այդ աղաղակները գալիս են չքաւորութեան, կարիքի և դառն անձաւութեան մէջից, ուր մարդիկ ոչ թէ ապրում են, այլ տանջվում և եթէ այդ տանջանքը դեռ ևս լեզու չէ առել և չէ արտայայտվում բաւարարութիւն գտնելու չափ թափով՝ այդ էլ կարծէք այն խորհրդաւորութեան ուժով, որոնք յատուկ են փոթորիկներից առաջ։

Թէ հողի կարիքը այս շրջանում որքան մեծ է, մենք առաջ կը բերենք թւեր—պերճախօս թւեր, վերցնելով այդ պաշտօնական հրատարակութիւններից։

Դարաչիչագի շրջանի 47 զուտ հայաբնակ, Թուրքաբնակ և մօլօկանաբնակ գիւղերում ապրում են 5225 ընտանիք վերջին տարիների հաշւով։ Այդ 47 գիւղերը ունեն միասին վերցրած 69,179 դեսեատին տարածութիւն հող, իւրաքանչիւր ընտանիքի գալիս է 13¼ դեսեատին հող—ճիշտ հաշւով 13, 24 դես. իւրաքանչիւր ընտանիք, միջին թւով հաշւելով ութ անդամից բաղկացած, մարդագլուխ գալիս է $1^1/_2$ դես.-ից մի փոքր աւելի հող. այս չափը թերևս շատերին բաւարար թւայ, բայց այդպէս չէ։ Հողերը բաժանված են երեք տեսակի. վարելահողեր, խոտհարքեր և արօտատեղիներ։ 69,179 դեսեատին տարածութիւնից վարելահողեր կազմում են 29,384 դես. կամ 42%, խոտհարքեր 4779 դես. կամ 8%, իսկ 35,016 դես. կամ 50% արօտատեղիներ, որոնք ներկայացնում են մեծ մասամբ ժայռեր, ապառաժոտ կուրծեր, խորթուբորթութիւններ յաճախ զուրկ օրինաւոր բուսականութիւնից։ Ուրեմն իւրաքանչիւր ընտանիքի հասնում է 5,62 դես. վարելահող և 0,92 դես. խոտհարք, իսկ միասին $6^1/_2$ դեսեատինից մի փոքր աւել. սակ է իւրաքանչիւր մարդուն 0,82 դես. վարելահող և խոտհարք, իսկ միմիայն վարելահող 0,70 դես. կամ ¾ դեսեատինից պակաս։ Ինչ ենք տեսնում, ութ անդամից բաղկացած մի ընտանիք 5—6 դեսեատին վարելահողից մի մասն էլ պարբերաբար խամ թողնելով, ընդամենը մի 4 դեսեատին հող մշակելով պէտք է վճարի հարկերը, պէտք է վերցնի ուտելու և սերմացուի համար անհրաժեշտ քանակութիւնը և աւելորդ մնացուքի վաճառքով հոգայ՝ միւս պահանջները, այն է ուտելիքներ, հագնելիքներ և այլն։ Ի հարկէ ոչ մի դէպքում վարելահողի մի այդպիսի տարածութիւն չէ կարող կերակրել մի գերդաստան, մանաւանդ երկար մշակվելով ուժասպառ է եղել նա և տալիս է շատ քիչ բերք—մէկին 2, 3, 4, շատ քիչ անգամ 5, ինչպէս այդ կը տեսնենք յետոյ։

Այսպէս է դրութիւնը այս շրջանում ընդհանուր առմամբ, պատկերը աւելի տխուր է դառնում, երբ վերցնում ենք հայ ազգաբնակութեան վերաբերեալ վիճակագրութիւնը առանձին Դարաչիչագի շրջանում։ Դիմենք այդ վիճակագրութեան։

Օնիկ

Ներքին-Ախտա

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԱՆՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

Մեր ուսումնարաններում տիրող աննօրմալ պայմանների շնորհիւ ռուսաց ուսանողների մեծ քանակութեամբ Գերմանիա գաղթելը ստիպում է մեզ նախազգուշացնել իմ հայրենակիցներին շատ մեծ յոյսեր չունենալ գերմանական ուսումնարանները մտնելու համար։ Այն ժամանակները, երբ ռուսներին ամեն տեղ Գերմանիայում ուրախութեամբ էին ընդունում ուսանող, միջնակարգ դպրոցի ինչպիսի վկայականով էլ մարդ լինէր,—այժմ անդարձ անցել են։ Ուսումնարանների լցվելը և քաղաքական հանգամանքները պատճառ եղան ռուսներին հալածելու և նրանց չընդունելու գերմանական բարձրագոյն դպրոցներում։ Ախենի պօլիտեխնիկումը մտնել ցանկացողներին, օրինակ, նախազգուշացնում ենք, որ այնտեղ իսկական ուսանող մտնել կարող են միայն նրանք, որոնք ռուսական գիմնազիաներից աւարտման վկայական ունեն։ Իսկ բոլոր ուրիշները, նոյնիսկ նրանք, որոնք նախկին ուսանողներ են Ռուսաստանի բարձրագոյն տեխնիքական դպրոցների կամ համալսարանների, ընդունվում են միայն իբրև հօսպիտանտներ (ազատ ունկնդիրներ), միևնոյն ժամանակ իրաւունք չունեն քննութիւն տալու և դիպլօմ ստանալու։ Գծագրական մասերում, լաբօրատօրիաներում հօսպիտանտներին յատկացնում են տեղեր ուսանողների կարիքները գոհացնելուց յետոյ միայն։ Բացի դրանից ռուսներից ուսման վարձից բացի իւրաքանչիւր կիսամեակում կը ստացվի 50 մարկ (օտարահպատակների հարկ)։ Միւս ուսումնարաններում, ինչպէս մենք լսեցինք, ռուսներին ամենևին չեն էլ ուզում ընդունել։ Այդ պատճառով Գերմանիայում սովորել ցանկացողներին խորհուրդ ենք տալիս չը հուսախաբվելու համար նախ բանակցութիւն սկսել ընտրած ուսումնարանի տեսչի հետ և գնալ նրանից դրական պատասխան ստանալուց յետոյ միայն։ Մտնելու համար անհրաժեշտ դօկումենտներ, բացի աւարտման վկայականից (հասունութեան), որը պէտք է թարգմանված լինի գերմաներէն և վաւերացված նօտարի կամ հիւպատոսի կողմից, ուրիշ ոչինչ հարկաւոր չէ։

«Русск. Вѣд.»

Գ. Պետունինկով

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Յունիսի 7-ին, չորեքշաբթի օրը Դէրբէնդի հասարակաց ժողովարանի դահլիճում տեղիս Թուրք մանկավարժները, միացած Թուրք ուսանողութեան հետ, ներկայացրին Թուրքերէն լեզուով ի նպաստ Թուրքաց նոր բացվելիք գրադարան-ընթերցարանի պ. Վեզիրօվի «Եաղըշտան չըխըը, եաղմուրա դուշտում» պիեսան։ Դահլիճը ծայրէ ծայր լիքն էր հայ և Թուրք հասարակութեամբ։ Չը նայած, որ ամբողջ երկու երկար ամիսներ պատրաստվել էին, բոլոր դերակատարները, բացի ուսանող պ. Իսրաֆիլօվից, որը շատ աջող կերպով կատարեց իր դերը, համարեա փչացրեցին, չը գիտենալով դերերը։ Հէնց այդ էր, որ պիեսայի միտքը հասարակութեան համար անհասկանալի մնաց։ Տեղիս յայտնի վաճառական Ս. Ամինօվը նոյն նպատակով նուիրեց 150 ր.։

Դարդիման

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գօրիս, յունիսի 1-ին

Դժբաղդ մինքենդցիների ներկայացուցիչ պ. Ի. Բուշտինեան խնդրեց 503 ազատված մինքենդցիների կողմից, ի նշան բուռն երախտագիտական զգացման, այսօրինակ շնորհակալութիւն յայտնելու այն անձանց, որոնք իրանց նպաստներով հնարաւորութիւն և միջոց տուին բոլոր ազատվածներին անցեալ 10 երկար ամիսներում ապրելու։

1) Մինքենդցի մի խումբ ծերունիներս, որոնք տեսանք մեր աչքերով մեզ նմանների անպատմելի մահը անգութ բարբարոսներից և անարժան գտնվեցինք մարտիրոսաբար ընկնելու նրանց կողքերին, մենք, ձեզնից մեզ հասած նպաստների շնորհիւ միայն կարողացանք ապրել մինչև այժմ։ Երանի ձեզ, հայ խմբագիրներ, հայ գրողներ, հայասէրներ. դուք ձեր պարտքը կատարեցիք։ Այսուհետև մեր աղօթքների մէջ, ոչ թէ մեզ, այլ ձեզ կեանք, ուրախ օրեր կը խնդրենք Աստուածանից։

2) Մենք պառաւներս, որոնք ներկայ էինք մեր ընկերակիցների ձեռք, ոտք, դաստակ կտրելուն և կամ կացնի, քարի հարուածով ջարդ ու փշուր անելուն, մեր մազապուրծներիս աղերսը դէպի ձեր փառքը, բարեբաստիկ կեանքն է ուղղված, ողորմած ազգայիններ, պարտաճանաչ հայեր։

3) Իսկ մենք երիտասարդներս, որոնք անզէն, անլեզու, լուռ ապշել՝ մնացել էինք մեզ հասած դժբաղդութեան համար և յանկարծ մեր կեանքի մօտալուտ վախճանը տեսնելով, դիմեցինք փախուստի, մեր կեանքը փրկեցինք։ Եւ մինչև այժմ մենք, ձեր նպաստների շնորհիւ ապրել ենք և ձերն է օգնող, ազնիւ, հաւատարիմ եղբօր անունը նպաստող կաթոգին սիրտ. անկեղծ շնորհակալութիւն։

4) Մենք՝ գեղջուկ հարսս, և աղջիկներս, որ սուրբ և անբիծ կեանք էինք վարել, մեր աչքի առջև մեր տանեկան ընկերների բռնաբարումը, լլկումը տեսնողներս, որոնց համար մահը այն րօպէին մի երկնառաք պարգև էր համարվում, մենք հրաշքով ազատվածներս, մեզ համար ձեռք պարզած հայ եղբայրների, հայ հարսերի, հայ օրիորդների քոյրական անկեղծ սրտին կեանք ու վայելք ենք մաղթում և մեր ջերմ աղօթքով Բարձրեալի գութը հայցում նրանց բարօրութեան համար։

5) Մենք երկսեռ մանուկներս, որոնք անմեղ գառների պէս այս ու այն թփի, քարի, քոլի տակ էինք ծածկվել, կուչ եկել, և որ տեսանք շատ մանուկներ ընկած իրանց սպանված մայրերի ստինքների վրա, դեռ շարունակում էին ագահաբար կենսատու մայրական կաթ ծծել, մենք ազատվածներս մեր, անզօր, անձայն մրմունքն ենք յայտնում Արարչին, և գութ ու գորով խնդրում մեզ պահպանող, մեզ խնամող ազգի յանձնաժողովների անդամներ, ձեզ, որ դուք, ձեր մեծ կոչումը շարունակէք, մինչ մենք, անմահ բարերարներ, կարող կը լինենք մեր սրտագին շնորհակալութիւնը ձեզ լսեցնելու։

Մինքենդից 503 շունչ ազատվածներս, մեր խորին շնորհակալութիւնն ենք յայտնում բոլոր այն անձանց, որոնք յանուն եղբայրական օգնութեան կրել են զրկանք ու տանջանք, և մեր դառն օրերում, մեր քաղցի ժամերում, մեր ակլոր ժամանակ մեզ հաց են մատակարարել, ջուր են հագցրել, ու մեզ կեանք են տուել։

Ամերիկահայ գաղութից մինչև Պետերբուրգ սփռված հայ բարերարների կօպէկները ի մի գումարվելով, մեր արցունքն էլ սրբելու բաժին յատկացվեց, մեր ցաւն էլ դարմանվեց։

Փառք ձեզ, նպաստող հայեր, և կեանք ձեզ, նպաստամատոյց յանձնաժողովներ։ Գովելի է ձեր եռանդը և անուրանալի ձեր աննման գործն ու արժէքը։

Ահա այսքանը ձեզ, մեր չոր ու ցամաք սրտից, մեր լալ ու տկար լեզուից, բարեկամ, ազնիւ եղբայրներ։

Ի դիմաց մինքենդցիների՝

Սագանդարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրծանիս-Թելեթի ճանապարհի վրա յունիսի 7-ին՝ երեկոյեան ժամը 5-ին, 5 զինված Թուրքեր կողոպտել են Խաթիս-Թելեթ գիւղի բնակիչներից մի քանիսին։

Մեզ հաղորդում են հետևեալը. հայոց ուսուցչական միութեան համագումարը բացվում է ամսիս 15-ին, հինգշաբթի օրը, առաւօտեան ժամի 8-ին Յովնանեան դպրոցում։ Մինչև բացվելը՝ կովկասահայ դպրոցի բոլոր ուսուցիչները և վարժուհիները ուսուցչական տոմսակ և տեղեկութիւններ ստանալու համար կարող են դիմել Յովնանեան դպրոցը, այսօրվանից սկսած, առաւօտեան ժամը 9—11-ը, իսկ երեկոյեան ժամը 6—7, որտեղ կը լինի ուսուցչական բիւրօի անդամներից մէկը։ Համագումարի մուտքը լինելու է բաց։

Մեզ հաղորդում են, որ Ստ. Մալխասեանցը յունիսի 11-ին Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեանը տարեկան զեկուցում ներկայացնելով դպրոցի ուսումնական վիճակի մասին, հրաժարական է տուել տեսչական պաշտօնից, որը վարում էր վերջին երեք տարվայ ընթացքում։

Փոխարքան թոյլատրել է նպաստ տալ Կաչկատան գիւղի բնակիչներ Յովսէփ Մարգարեանի և Զաքարիա Ալէքսանովի այրիներին, առաջինին 600 րուբլի, երկրորդին՝ 399 րուբլի։ Այդ գումարները ժողովելու են Գէորգիեւսկի շինական հասարակութիւնից Բօրչալուի գաւառի գեներալ-նահանգապետի ներկայացուցչի հրամանով, որովհետև յիշեալ հասարակութիւնը ապրիլի 19-ին Մարգարովի և Ալէքսանովի սպանիչներին թագցրել էր իր մօտ։

Յունիսի 10-ին, առաւօտեան ժամի $9^1/_2$-ի մօտերը, Թիֆլիսի Մետէխի բանտի բանտարկեալների ընդհանուր բաժնից (№ 31) պատը ծակելով փախել են 9 հոգի.—Սիմէօն Նուցուբիձէ, որ մեղադրվում է մեքենավար Պետրօվի սպանութեան գործում 2) Գաբրիէլ (Նիկօլայ) Մժանավեգձէ-Սալուկվաձէ, որ մեղադրվում է Միխայլօվօ կայարանի գանձապահ իշխ. Անչիբաձէի սպանութեան մէջ, 3) Ալէքսանդր Մչեդլիձէ, որ մեղադրվում է քրէական պատժագրքի 126 և 129 յօդուածներով, և աքսորվելու էր ցմահ Սիբիր, 4) Պետր Բասարիչէվ, 5) Շիօ Պալիաշվիլի 6) Գասպար Քոչարեան, 7) Դաւիթ Կաչաուրի, որոնք մեղադրվում են քրէական պատժագրքի 126-րդ յօդուածով և որոնք աքսորվելու էին ցմահ Սիբիր, 8) Նիկօլայ Օտարով, որ մեղադրվում է քր. պատժ. 2-րդ մասի 126-րդ յօդուածի հիման վրա և 9) Արչիլ Ջիբկվէլօվ, որ փախել էր Ուֆիմսկի նահանգից։ Սրանցից 2-ը բռնվեցին տեղում կանգնած պահապան զինուորից, երբ աղաղակ բարձրացաւ։ Այս յունիսի 12-ի լուսաբացին, 2-րդ քաղաքամասում ոստիկանական պաշտօնեաները բռնել են փախչողներից մէկին ևս Պետր Բասարիչէվին, որը նորից բանտ նետվեց։

Էլէքտրաքարշի գործադուլի առիթով գեներալ-նահանգապետը, ինչպէս ասում են, կարգադրել է, որ երէկվանից էլէքտրաքարշի գործադուլ անող բոլոր ծառայողները համարվում են արձակված։ Այն ծառայողները, որոնք կը ցանկանան նոր պայմաններով ծառայել—կը մնան, իսկ նրանք, որոնք չեն ցանկանալ՝ կարտաքսվեն Թիֆլիսից և կուղարկվեն հայրենիք։ Արտաքսվելուց յետոյ այն արձակված ծառայողները, որոնք կը համարձակվեն վերադառնալ Թիֆլիս, ադմինիստրատիւ կարգով կուղարկվեն աքսոր Ռուսաստանի խորքերը, Օլօնեցկի նահանգը։

Բագուի ժամանակաւոր գեն. նահանգապետի կարգադրութեամբ Բագւում հրատարակվող «Трудъ» լրագիրը դադարեցրված է մինչև զինուորական դրութեան վերացումը։

Ստացանք «Թւաբանական խնդիրներ և օրինակներ» գրքոյկը, պրակ Բ., փոխադրութիւն Ար. Սպարապետեանցի, տպված է Թիֆլիսում, գինը 30 կօպէկ։

Գործադուլ հացթուխներից՝ միտինգին ձերբակալեցին 380 հոգու, որոնք 2-րդ օրը ազատութիւն ստանալով վերսկսեցին իրանց գործերը։ Նրանց պահանջներից մի քանիսը հիմնաւոր են ճանաչված։ Հացթուխների հետ միասին միտինգին ձերբակալված ագիտատոր—ուսանողները չեն արձակված և պէտք է Թիֆլիսից աքսորվեն։

Եարօսլավլից հեռագրում են «Русск. Вѣд.»-ին, որ Եարօսլավլի «ռուս ժողովրդի միութեան» օրգան «Русскій Народъ»-ի վերջին համարում տպագրված են յօդուածներ, որոնցով հրաւէր են կարդում ակտիւ գործողութիւնների դիմելու հրէաների ու նրանց հետևողների դէմ։

Կօպէկների շրջաններից ընտրված պատգամաւորները վճռել են միանալ և կազմել մի առանձին պարլամենտական ֆրակցիա։

(Дума)

Աւտօնօմիստների ու Լեհական Կօլօյի պարլամենտական միութեան մէջ մեծ տարաձայնութիւն է ընկել։ Այդ երկու միութիւններն էլ պառակտումն է սպառնում, գլխաւորապէս, ագրարական հարցի պատճառով։ (Дума)

Մօտ օրերս Պետական Դումայի քահանայ անդամները հրաւիրվել էին Թէյի միտրոպոլիտ Անտօնիի մօտ։ Այնտեղ նրանց սպասում էին սինօդի օբեր-պրոկուրոր Շիրինսկի-Շիխմատօվը, «Миссіонер. Обозр.»-ի խմբագիրը և ուրիշները։ Միտրոպոլիտը զրուցեց Դումայի անդամների հետ և խորհուրդ տուեց նրանց միանալ Պետական խորհրդի անդամների հետ գործողութեան մի ծրագրի հետևելու համար։ Նախ քննութեան առնվեց այս հարցը. պահպանե՞լ, եկեղեցական հողերը թէ՞ ոչ։ Դումայի 6 անդամներից Աֆանասիէվ, Օգնէվ և Պօյարկօվ քահանաները յայտնեցին իրանց կարծիքը եկեղեցական հողերի գրաւման մասին յօգուտ գիւղացիների, Վօզդվիժենսկի քահանան համաձայնութիւն էր յայտնում գրաւման համար միայն այն դէպքում, եթէ հողի փոխարէն հոգևորականութիւնը կը ստանայ լաւ ռոճիկ, իսկ Պօմմա, Կօնցեվիչ քահանաները և մնացեալ ներկայ եղողները խօսեցին հակառակ որևէ կերպով գրաւման։ Երկար վիճաբանութիւններից յետոյ ժողովը ցրվեց առանց որևէ որոշ եզրակացութեան գալու։ Ի միջի այլոց միտրոպոլիտ Անտօնին յայտնեց, որ նա մօտ օրերս պալատումն էր և կարող է հաղորդել, որ Դուման զանազան բազմաթիւ պատճառների շնորհիւ այժմ ոչ մի դէպքում չի արձակվիլ։

«Бирж. Вѣд.»

Կրասնօյէ-Սելօյից հաղորդում են, որ Պետերբուրգի մի քանի գնդերում (ասում են Նօվօչերքասսկի) և Պետերհօֆի գնդերում (ուլանսկի) խլրտումներ կան։ Այդ լուրը ճշտվում է նրանով, որ Կրասնօյէ-Սելօյից Պետերհօֆ են ուղարկել ամբողջ Իզմայլօվսկի գունդը և առաջին արտիլլերիական բրիգադայի 4-րդ բատարէան։ Նախ քան 4-րդ բատարէան նշանակելը, առաջարկել էին երկու ուրիշներին, բայց զինուորները հրաժարվեցին գնալ։ Լուր է պտտում, որ Պրեօբրաժենսկի գնդում կալանաւորված են 180 հոգի։ Զօրաբանակներում զինուորների մէջ նկատվում է նոյն կռիւը, ինչ որ բանուորների՝ կռիւ սև հարիւրակայինների դէմ։ Այն զինուորներին, որոնք ճնշելու, բռնութիւններ գործելու ոգևորութիւն են ցոյց տալիս, զանազան միջոցներով պատժում են։ Երբեմն ուղղակի ծեծում են։ Արտիլլերիստներին բանակատեղից ուղարկում են մանևրների, ասելով, որ նրանց ուզում են անջատել միւսներից։ «Курьеръ»

Տուլայից հեռագրում են «ХХ Вѣкъ»-ին. «Ուզլովա կայարանում տեղի ունեցած անկարգութիւնների պատճառով այնտեղ են ուղարկել Տրօիցկի գնդի 3-րդ վաշտը. այնտեղ միևնոյն ժամանակ կանգնած է պատրաստ պատժական գնացքը։ Նօվօ-Ինգերմանլանդսկի գնդի զինուորները յայտնեցին իրանց իշխանութեանը, որ ուժասպառ են եղել։ Նրանց կորած հրացանները չեն գտնվել»։

Ժողովրդին տանել կառավարութիւնը, որ թքում էր Պետական Դումայի յայտնած անվստահութեան վրա, որ իր երեսը յանկարծակի դարձրեց դէպի նոր ջարդերի ու գնդակահարութիւնների կողմը, դժոխք ստեղծելով խաղաղ անպաշտպան ժողովրդի համար, այժմ ընկել է դժուար դրութեան մէջ։ Նրա վերջին յոյսը, գվարդիան, սկսում է երեսը դարձնել իր քաջայաղթ հրամանատար-դահիճներից։ Մինչև անգամ Ցարսկօյէ-Սելօյինը, ⅔ գվարդիայի այդ պարծանքը, նա էլ վրդովվեց։ Անցած երկուշաբթի օրը Ցարսկօյէ-Սելօյում հուսարների գնդի զինուորների մէջ խլրտումներ երևացին և բոլոր էսկադրօնները, բացի մէկից, հրաժարվեցին կատարել օֆիցերների հրամանները։ Երեքշաբթի օրը Պետերհօֆից Ցարսկօյէ-Սելօ եկան թագաւորը, գեներալ Տրէպօվի հետ և, զինուորների շրջանի մէջ։ Զինուորների ցանկութեան համաձայն Տրէպօվը ստիպված էր դուրս գալ շրջանի միջից և քիչ յետոյ գնաց Ցարսկօյէ-Սելօյից։ Թագաւորը առանձին ցուցակներով կանչեց մի առ մի մի քանի զինուորների, հարց ու փորձ արեց անբաւականութիւնների համար, յիշեցրեց թէ նրանք ինչպէս էին ապրում այն ժամանակ, երբ ինքը դեռ գահաժառանգ էր ու ծառայում էր այդ գնդում, և խորհուրդներ էր տալիս զինուորներին։ Կանչված զինուորներից մէկը յայտնեց ընդհանուրի դժգոհութիւնը, որ իրանց ուղարկում են օգնելու ոստիկանութեանը ճնշելու ամբոխը, որոնց մէջ նրանք երբեմն հանդիպում են իրանց հարազատներին։ Զինուորներին հարցաքննելուց յետոյ, Թագաւորը գնաց օֆիցերների մօտ։ «Курьеръ»։

«Биржев. Вѣд.»-ի թղթակիցը հեռագրում է. «Ջարդերի հեղինակ պրիստաւ Շերէմետևէվին բարձր պաշտօն տալով փոխադրեցին Պրուժան, խապրամիկի օգնական»։

Յունիսի 5-ին Պետ. Դումայի անդամ Տէսլեակին, որ առաջարկել էր գահական ճառի պատասխան—ուղերձի մէջ մտցնել մի կէտ զօրքի և նաւատորմի մասին, ներկայացաւ մի պատգամաւորութիւն Պետերբուրգի քաղաքապահ զօրքից 16 հոգուց բաղկացած, ջերմ շնորհակալութիւն յայտնեց յանձին Տեսլեակին Պետական Դումային զօրքի մասին հոգալու համար և յայտնեց, որ զօրքի մէջ դաւադրութիւն կազմվելու մասին տարածված լուրերը Դումայի դէմ բոլորովին սխալ են։ Պետերբուրգի զօրքերը շատ լաւ հասկանում են, որ միայն Դուման կարող է տալ աշխատաւոր գիւղացիութեանը և բանուոր ժողովրդին հող և ազատութիւն, այդ պատճառով զինուորները երդվում են ամեն միջոցներով պաշտպանել նրան կառավարութեան դէմ կռւելիս։

«Голосъ»

Յունիսի 5-ին Պետերբուրգի կառավարչական բոլոր դեպարտամենտների մէջ, «Дума»-ի ասելով, յամառ կերպով լուր էր պտտում, որ Նիկօլայեվսկի երկաթուղին գործադուլի նախօրեակումն է և որ այդ երկաթուղու գործաղումը կը լինի ազդանշան կայսրութեան միւս բոլոր երկաթուղիների համար։

—

«Наша Жизнь»-ը հաղորդում է, որ զինուորականների մէջ յունիսի 5-ին լուր էր տարածվել Պրեոբրաժենսկի և Սեմեօնովսկի լէյբ-գվարդիայի գնդերի մէջ կատարված կալանաւորութիւնների մասին։

—

Սինոդը եռանդուն կերպով սկսել է տեղեկութիւններ հաւաքել Պետական Դումայի անդամ քահանաներ՝ Աֆանասիեվի և Պօյարկովի վարք ու բարքի մասին։ Պատճառը այն է, որ իբրև թէ նրանք Դումայում հոգևոր կոչման անվայել ճառեր են խօսում։ «Слово»

—

«Рѣчь»-ը հաղորդում է, որ պատգամաւոր Ուլիանովի «Дѣло Народа» լրագրի խմբագրի գործի քննութիւնը, որ նշանակված էր յունիսի 14-ին դատաստանական պալատում, յետաձգված է։

—

ԵՐԵՒԱՆԻՑ. մեզ գրում են. «Այս տարի Երևանի արական գիմնազիայում իրանց ուսման ընթացքն աւարտեցին 30 աշակերտներ և 16 էկստէրններ։ Ոսկէ մեդալ ստացան՝ Արմէնակ Ալօքչյեանց—հայ, ալէքսանդրապօլցի, Միխայիլ Զարցին—հրէայ, ապրում է Պետրովսկում և Մամէդբէգով Մահմուդ—մահմեդական, երևանցի. իսկ արծաթէ մեդալ ստացաւ, Ալէքսէյ Բօգօլիւբսկի—ռուս, վորօնէժցի։

—

ԹԵՀՐԱՆԻՑ մեզ հաւաստի աղբիւրներից յայտնում են, որ Պարսկաստանի Մուզաֆֆեր-Էդդին Շահը մտադիր է երկար ժամանակով գնալ Եւրօպա, իր առողջութիւնը վերականգնելու, որ վերջին օրերս զգալի կերպով քայքայվել է։ Այդ ժամանակամիջոցում երկրի կառավարութիւնը կը յանձնվի պարսից Թագաժառանգին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՄԱԿԵԴՈՆԻԱ

Արիւնալի վիճակագրութիւն։ Անգլիական մի լրագիր հրատարակել է քաղուածներ «պաշտօնական վիճակագրութիւնից» բուլղարական յեղափոխական հրոսակախմբերի Մակեդոնիայում ունեցած գործունէութեան զոհերի թւի մասին։ Մինչև մայիսի 1-ը սպանված են 277 յոյներ. 134 հոգի Մօնաստիրի վիլայէթում, 103 հոգի Սալօնիկի և 40՝ Սէրրէսի։ Զոհերի մէջ կան 12 կանայք և 11 երեխաներ։ Յարձակման ենթարկված 323 հոգուց միայն 46-ը առողջացան վէրքերից։ Զոհերի մեծ մասը սպանված է հրացանազարկով, մի մասը այրված է, սպանված կացիններով կամ խեղդված գետերում և լճերում։

Նոր համաձայնութիւն։ Սօֆիայում հրատարակվող «Courier des Ralkans» լրագիրը հաղորդում է մի սենսացիօն լուր, իբր թէ Աւստրիայի և Յռնաստանի մէջ համաձայնութիւն է կայացել Մակեդոնիայի և Ալբանիայի վերաբերմամբ։ Այդ համաձայնութեան նպատակն է միաբան գործունէութիւն Բալկանեան թերակղզու սահմաններում և ուղղված է, գլխաւորապէս, Իտալիայի աճող ազդեցութեան դէմ ալբանական ժողովրդի մէջ։

ԲԵԼԳԻԱ

Անկարգութիւններ։ Վերուիէ քաղաքում խոշոր խռովութիւններ ծագեցին։ Մի բանուոր կալանաւորվեց. ընկերները, կամենալով խափանել կալանաւորումը, սկսեցին քարեր շպրտել ժանդարմների վրա։ Նոր կալանաւորութիւններ եղան։ Ամբոխը գրգռվեց. օգնութեան հասած հեծելազօրքը ընկաւ բանուորների վրա և սկսեց թրերով հարուածել։ Հետևանքը այն եղաւ, որ երկու կողմից էլ շատ վիրաւորներ եղան։ Երկիւղ են կրում նոր ընդհարումներից, որովհետև յուզմունքը բանւոր ժողովրդի մէջ շարունակում է զօրանալ։

ՄԵՔՍԻԿԱ

Արիւնահեղ կռիւ հանքագործների միջեւ.— Ամերիկեան «Sun» լրագիրը հաղորդում է, որ մի ողբերգական ընդհարում է տեղի ունեցել Կանանէայում (Մեքսիկա), Greene Consolidated Company-ի հանքերում, Ամերիկայի և Մեքսիկայի հանքագործների միջև։ Թափված է արդէն պրօլետարական արիւնը։ Իսկ թէ ինչն է եղել պատճառ այդ խելագար կռւի, բոլորովին պարզ չէ. մի աղբիւրի համաձայն, որպէս թէ մի մեքսիկացի ոստիկան րէվօլվէրի մի հարուած է արձակել ամերիկացի մի բանւորի վրա և մի այլ աղբիւրի համաձայն, որպէս թէ մեքսիկացի հանքագործները պահանջել են ռոճկի յաւելում Կանանէայի պղնձի հանքերի կառավարիչ Գրինից, որը մերժել է։ Բայց թէ մեկ թէ միւս դէպքը ինչպէս կարող էին լարել երկու թէև տարբեր երկիրների, բայց նոյն դասակարգի դժբաղդ արարածներին—միանգամայն անհասկանալի է։ Այդ հանքերում բանում են 2,000 մեքսիկացիներ և նոյն թւով ամերիկացիներ։ Ասում են նոյնպէս, որ իբր թէ այդ կռիւը տեղի է ունեցել ոգելից ըմպելիքի ազդեցութեան տակ, որից յաճախ անձնատուր են լինելիս եղել մեքսիկացի բանւորները։ Յամենայն դէպս փաստը խօսուն է և ցոյց է տալիս, որ պրօվօկացիան. ոստիկանական կամ կապիտալիստական, ամեն երկրում, ամեն երկինք տակ գոյութիւն ունի և նա գործում է իր շահերի համաձայն։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

10 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 յունիսի։ Պետական Դումայի անդամ Շչէպկինը—ժողովրդական ազատութեան կուսակցութեան կլուբում Բէլօստոկի ջարդի մասին զեկուցանելու ժամանակ կարծիք է յայտնել, որ կառավարական երկրորդական գործակալները—պրիստաւներ, ոստիկանական վերակացուներ և հասարակ ոստիկաններ—ջարդի ուղղակի մեղաւորներն են հանդիսանում. տեղական բարձր իշխանութիւնը մեղաւոր է անգործունէութեան և, իշխանութիւնը ի չարը գործ դնելու մէջ, իսկ կենտրօնական իշխանութիւնը մեղաւոր է նրանով որ չը կարողացաւ հաւատ ներշնչել, որ ինքը իսկապէս ջարդեր չէ կամենում։ Ժողովրդական ազատութեան կուսակցութեան պարլամենտական ֆրակցիան յունիսի 9-ի նիստին ընդունել է մամուլի օրինագծի առաջին 7 գլուխները։—Գեներալ-լէյտենանտ Րէնէնկամֆը նշանակված է Սիբիրի երրորդ զօրաբանակի հրամանատար։

ՄՕՍԿՎԱ, 9 յունիսի։ Պետերբուրգից նահանգապետին հեռագրում են, որ շուտով Մօսկվայի նահանգի արտակարգ պահպանութիւնը երկար տևելու առիթով հրաման կը լինի։ Դեռ սկզբում այդպիսի հրաման ստացել է քաղաքապետը։—Ռուսաց սօցիալ-դեմօկրատիական բանուորական կուսակցութեան կօմիտէտը իր կուսակցութեան անդամներին առաջարկել է հեռու մնալ փողոցներում ցոյցեր անելուց և Պետական ու մասնաւոր հաստատութիւնների վրա յարձակվելուց։

ԲԷԼՕՍՏՕԿ, 9 յունիսի։ Ջարդի դատաստանական քննութիւնը յանձնված է Վիլէնսկի առանձին կարևոր գործեր վարող քննիչ Շուլցին։

ԿՕՎՆՕ, 9 յունիսի։ Մի փողոցում տան մէջ գտնված է 5 ռումբ. պատրաստի ռումբերից մէկը 10 ֆունտանոց է. բացի ռումբերից գտնվել են ռումբեր պատրաստելու գործիքներ. ոչ ոք չէ բռնված։

ԲԵՐԼԻՆ, 10 յունիսի։ Գերմանացի սօցիալիստները համախմբում են երկաթուղային, նաւահանգստային տեղափոխող բանուորներին և նաւաստիներին ցանկանալով համագերմանական ցոյց կազմել։

ՏԱՆԺԷՐ, 10 յունիսի։ Մեր պաշտօնական թղթակիցը հաղորդում է, որ նահանգում ագրարային անկարգութիւններ բնաւ չը կան և նահանգապետը մտադիր չէ շրջել գաւառները։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 10 յունիսի։ Ի նկատի ունենալով, որ յեղափոխականները սպառնում են ոյժով տպարան ձեռք ձգել—կուսակցական «Солдатъ» թերթը տպագրելու համար, ադմինիստրացիան բոլոր տպարաններում ոստիկաններ է դրել։

ՊՕԼՏԱՎԱ։ Պրիլուկում երկու խոշոր գործարանների բանուորները գործադուլ արին։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 10 յունիսի։ Սենատը մի եզրակացութիւն կազմեց Ռուսաստանի ջարդերից վնասված հրէաներին ցաւակցութիւն յայտնելու համար։

ՍԻԶՐԱՆ, Գիւղացիները ինքնակամ հնձում և տանում են խոտը և իրանց անասունները արածացնում են կալուածատիրական արօտատեղիներում։

11 յունիսի

ԵԱՐՕՍԼԱՎ, 10 յունիսի։ Ըստ որոշման նահանգական ընդհանուր ժողովի—ոստիկանութիւնը փակեց կադէտների կուսակցութեան Եարօսլավի խմբակի բիւրօն և գրաւեց եղած թղթերը և արձանագրութիւնները։ Այդ որոշման համաձայն փակվում է նաև կուսակցութեան Րիբինսկի կօմիտէտը։

ՄՕՍԿՎԱ,—Վերէյսկի գաւառում Եակունչիկովի գործարանի 6000 բանուորները գործադուլ արին։

ՍՈՒԳԱԺԱ, 10 յունիսի։ Իշխան Գագարինի կալուածքից գիւղացիները վռնդելով կողմնակի բանուորներին, իրանք են հնձում արտերը—ինքնակամ կերպով։

ՕՆԷԳԱ։ Անտառասղոցային բանուորները գործադուլ արին։

ՔՈՒԹԱՅԻՍ, 9 յունիսի։ Ճիատուրում մարգանէցի հանքերում աշխատող 20,000 բանուորները գործադուլ արին. պահանջները տնտեսական են։

ԲԵՐԼԻՆ։ Հրատարակված է պաշտօնապէս Էլզաս-Լոտարինգիայի մինիստրութեան որոշումը, որի համաձայն Ռուսաստանից խոզի միս արտահանելը այսուհետև արգելվում է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 յունիսի։ Պետերբուրգի կանանց բժշկական ինստիտուտին իրաւունք է տրված կանանց եւ տալ պրօվիզօրի, ատամնաբոյժի, տեղական կառավարչի—մագիստր ֆարմայի կոչումները, տալով համապատասխան դիպլօմներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 յունիսի։ Պետական խորհրդի կենտրօնի խմբակը իր նիստերից մէկում կազմել է հիմնական հայեցակէտերի այսպիսի մի նախագիծ. 1) Իրականացումն, պահպանումն և օրինական զարգացումն Բարձրագոյն շնորհած սահմանադրութեան ակտերի միայն—միապետական սկզբունքներով. 2) Ռուսաստանի մեծութեան ոյժի համար անհրաժեշտ է պահել պետութիւնը ամբողջ և անբաժան, միաժամանակ ընդունելով հաւասարութեան և ցեղերի ու ժողովուրդների կուլտուրական առանձնայատկութիւնները յարգելու սկզբունքները. 3) Ինքնավարութեան—և նրա տարածման սկզբունքների զարգացումն. 4) Ամրապնդումն ազգաբնակութեան մէջ այն համոզման, որ անկարելի է ազատութիւնը առանց յարգանքի դէպի օրէնքը և կարգը, և ընդարձակ սերմանումն ժողովրդական լուսաւորութեան ամեն աստիճանների—կրօնի և բարոյականութեան սկզբունքներով, ինչպէս և սէր ներշնչելով դէպի հայրենիք. 5) անհրաժեշտ են տնտեսական բարենորոգումներ, ուղղված ազգաբնակութեան բոլոր խաւերի, առանձնապէս հողագործ և բանուոր դասակարգերի բարեկեցութիւնը բարձրացնելու նպատակին,—ապահովելով ինքնագործունէութեան լիակատար ազատութիւն՝ տնտեսական շահերի և ժողովրդական աշխատանքի արդարութեան ընդարձակ զարգացման գործում, առաջին իսկ հերթում դնելով հողատիրութեան և հողից օգտվելու պայմանները բարելաւելու հարցը, ինչպէս և այդ բարելաւումը գործադրել զանազան տեղերում, համապատասխան տեղական պայմանների։ 6) Ամենաառաջին հոգսը համարելով ներքին խաղաղութեան և կարգ ու կանօնի մտցնելու գործը, յարգելով հանդերձ անձնաւորութեան ազատութիւնը, իւրաքանչիւր քաղաքացու սեփականութիւնը և իրաւունքները,—Պետական խորհրդի խմբակը գտնում է, որ այդ բանին նուիրված կառավարութեան և անկախ դատարանի գործունէութիւնը պէտք է լինի ուշադրաւ, անկողմնապահ և խիստ օրինական, միանգամայն ազատ և ինքնուրոյն դատարանից. 7) Խմբակը հրաւիրում է Պետական Դումայի այն բոլոր անդամներին՝ որոնք համամիտ են և ընդունում են այդ որոշումները,—յարել իրանց խմբակին և մտնել կազմի մէջ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 յունիսի։ Մամուլի գործերը վարող Պետերբուրգի կօմիտէտը հարց է յարուցել՝ քրէական պատասխանատուութեան ենթարկել հետևեալ անձանց. — «Голосъ»-ի խմբագիր—հրատարակիչ Մերկլզովին, «Дума»-ի խմբագիր Անատոլ Վինավէրին, «Курьеръ»-ի խմբագիր Սերգէյի Ցիտէրբաումին, «Трудовая Россія»-ի հրատարակիչ Ֆէդոր Օնիպկոյին, «Впередъ»-ի խմբագիր—հրատարակիչ Մովշի Սարօնսկուն և «Призывъ»-ի խմբագիր—հրատարակիչ Ագնաուրովին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 յունիսի։ Պարլամենտական մասնաժողովը անձի անձեռնմխելիութեան օրինագիծը քննելով՝ ընդունել է Պետրաժեցկու առաջարկած կանոնները—Ռուսաստանում ապրող օտարերկրացիների պաշտպանութեան մասին։ Այդ կանոնների համաձայն օտարերկրացիներից ոչ մէկին իրաւունք չը կայ աքսորելու կայսրութեան սահմաններից առանց դատարանի դատավճռի, ի բաց առնելով զինուորական դրութիւնը, ինչպէս և մի քանի առանձնակի դէպքեր։ Ագրարային մասնաժողովում նախորոշվել են երկու խմբեր—առաջինը՝ չափաւոր կոմս Հէյդէնի գլխաւորութեամբ, որի մէջ մտնում են աւտօնօմիստների մի մասը և լէհերը, և որը մերժում է պետական հողային ֆօնդի սկզբունքը, իսկ երկրորդը՝ աշխատաւոր-կադէտներ։ Առաջին խումբը ձգտում է մասնաժողովը 2-ի բաժանել և Դումային առաջարկել քննելու համար ագրարային երկու զուգահեռական օրինագծեր։ Դրան հակառակ է գնում աշխատաւոր սահմ.-ռամկավարների խումբը։—Քաղաքապետի հրամանով «Голосъ» և «Трудовая Россія» լրագիրների տպարանները կնքված են։ Պաշտօնական անձանց ապօրէն գործողութիւնները քննող մասնաժողովը յունիսի 10-ին լսելով Բէլօստոկի ջարդի զեկուցումը—պատգամաւորներ Շչէպկինից, Եակուբսոնից և Արականցէվից, վճռեց իր եզրակացութեան հետ միասին այդ զեկուցագիրը յանձնել Դումային ի քննութիւն։

ՄՕՍԿՎԱ, 10 յունիսի։ Քաղաքապետը դիմել է Մօսկվայի նահանգական դատարանի դատախազին, խնդրելով պատասխանատուութեան ենթարկել «Московскія Вѣдомости» լրագրի խմբագիր Գրինգմուտին, որովհետև տպել է այսօրվայ համարում ուղղակի մարդկանց ուղղված մի կոչ, որը իր մէջ պարունակում է նախօրօք մտածված սուտ լուրեր Պետական Դումայի գործունէութեան մասին, որ յուզում և պղտորում են հասարակական միտքը։

11 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յունիսի։ Հակառակ լրագիրներում երևցած լուրերի, որ իբր ներքին գործերի մինիստրութիւնը ստացել է ապացոյցներ, որ աշնանացանի լիակատար անբերրիութիւն է տիրում 222 գաւառներում, նահանգապետների հաղորդագրութիւնների համաձայն անբերրիութիւն սպասվում է միայն 103 գաւառներում։

ՕԴԵՍԱ, 10 յունիսի։ Մի փողոցում Գէֆօնդի բնակարանում գտնվել են 40 ռումբ։ 5 հոգի ձերբակալված են։

ՊԵՐՄ։ Երևան է հանած ռումբեր պատրաստելու արհեստանոց, ուր եղել են 8 պատրաստի ռումբեր։

ԲԷԼՕՍՏՕԿ, 11 յունիսի։ Ներքին գործերի մինիստրի խորհրդի անդամ Ֆրիշը այցելեց հրէական հիւանդանոցը և հիւանդներին հարցուփորձ անելուց յետոյ մեկնեց Պետերբուրգ։

ՊԵՏՐՕԿՕՎ։ Սպանվեց ոստիկանապետի պաշտօնակատար Կրէչկօվսկին։

ՄՕՍԿՎԱ, 11 յունվարի։ Գործադուլ արին Բալաշովի և Րօզժսկի մանուֆակտուրային և մետաղաձուլական գործարանների բանուորները։ Կօշկակարների գործադուլը, որ մի րայօնում վերջացաւ, մի ուրիշ տեղ կրկին վերսկսվեց։ Մի քանի գործարաններում աշխատանքները վերսկսվում են։

12 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 յունիսի։ Ֆինանսների մինիստրի պաշտօնը շնորհակալութեամբ կատարելու համար պետական բանկի խորհրդի անդամ Շիպօվին շնորհված է 1-ին կարգի Աննայի շքանշան։

ԿԻԵՎ, 11 յունիսի, Ջարդերի առաջն առնելու համար ներկայացած հրէա պատգամաւորութեան երկրի կառավարիչը ասել է, որ քանի որ ինքը Կիեվի գեներալ-նահանգապետի պաշտօնը ստանձնած ունի, ոչ մի ջարդ տեղի չի ունենայ։ Վերջում խնդրել է պատգամաւորութեան, որ արգելեն հրէաներին հեռանալ քաղաքից, որովհետև դա աւելի է մեծացնում երկիւղը։

ՊԵՐՄ։ Ոստիկանութիւնը գտել է սօցիալ-դէմօկրատների տպարանը, որի մէջ գտնվել են 9 պուդ տառեր և պատրաստի թռուցիկներ երկու կապոց։

ՎԻԵՆՆԱ, 11 յունիսի։ Արտաքին գործերի մինիստրութեան ելումուտքի հաշիւը քննելու ժամանակ Կրամարժը ասել է՝ Ռուսաստանի ներքին դրութեան առիթով, որ այնտեղ տեղի է ունենում ոչ արդէն քաղաքական յեղափոխութիւն, այլ սօցիալական յեղափոխութիւն, որի գլխաւոր կէտն է կազմում սեփականութեան իրաւունքի հարցը։ Ազատութիւն և կարգ ու կանօն, ահա թէ որպիսի միութիւնը կը փրկէ Ռուսաստանին։ Ազատութիւն մտցնելու ձգտող մարդկանց ամենապակասաւոր կողմը նրանումն է կայանում, որ արիութիւն չունեն կարգ ու կանօն ստեղծել, իսկ նրանք, որոնք կարգ ու կանօն են կազմում, ազատութիւն չեն ուզում։ Մատնացոյց անելով հրէական վերջին ջարդերի վրա, հռետօրն ասել է, որ հրէաները Ռուսաստանում յեղափոխականների մէջ առաջնընթաց են հանդիսանում, և հանուր աշխարհի պարտքը պէտք է լինի ատել ոչ միայն գազանային սպանութիւնների նախաձեռնողներին, այլ և նրանց, որոնք միւս կողմից ռուսաց հողը աւերումով են ներկում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 յունիսի։ Այրվեց Զրապի անտառասղոցային գործարանը։ Վնասը 600,000-ի է հասնում. պատճառը անյայտ է։

ԲԷԼՕՍՏՕԿ, 11 յունիսի։ Քաղաքը աստիճանաբար հանգստանում է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 յունիսի։ Աշխատաւորների խմբակը ընդունել է պարլամենտական ֆրակցիայի որոշումը, որ անհնար է այս ամառ արձակուրդ առնել, և որոշել է, որ իր անդամներից մի քանիսին մի քանի անգամ ուղարկէ գաւառները, մշտական կապ հաստատելու համար ազգաբնակութեան և տեղական կօմիտէների կազմակերպութիւնների հետ։—Աշխատաւորների խմբակը ընդունել է Վօդօվօզօվի զեկուցագրի ընդհանուր որոշումները, որ վերաբերում են ընդհանուր ընտրողական սիստեմին և քառանդամ ֆորմուլային։ Այդպիսով ագրարային հարցի քննութիւնը՝ աշխատաւոր խմբակը յանձնել է տեղական ինքնավար մարմիններին։

ԲԱԳՈՒ, 11 յունվարի։ Գործադուլային շարժումը մեղմանում է և համարեա ամենուրեք աշխատում են։ «Трудъ» լրագիրը փակվեց։ Նրա փոխարէն լոյս է տեսնելու «Маякъ»։ Ժամանակաւոր գեներալ-նահանգապետ Ֆադէևին բոլոր ազգութիւնների ներկայացուցիչները մի ուղերձ են ներկայացրել, որի մէջ յիշատակում են գեներալի մատուցած ծառայութիւնները հայ-թուրքական ընդհարումների առաջն առնելու գործում, առաւելապէս մատնացոյց են անում նրա անկողմնապահ, սառնարիւն և կորրէկ գործողութիւնների վրա։

ՀԼՕՏԿ։ Հացթուխները գործադուլ արին, պահանջները տնտեսական են։

ՐԱՏՕՄ։ Հացթուխների գործադուլը վերջացաւ, նրանց պահանջներին բաւարարութիւն է տրված։

ԲԷԼՕՍՏՕԿ, 11 յունիսի։ Բէլօստոկի գաւառի գեներալ-նահանգապետ նշանակված է գեներալ Բօգաէվսկին։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզական հ.
Կ. Մ. ՋԻՆՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՏԱՐԱՓԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Խ. Գ. ԱԲԵԼԵԱՆՑ—5—6 ժ. ներքին հիւանդ.
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկահատ։
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ—7—7 և կէս ժ. ներքին և երեխայոց հ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ [illegible] և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

Բ Ժ Ի Շ Կ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպեկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կադետսկի փողոցից № 2.
(ա. օ.) 172—300

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Պ. ՋԱԽԱՐԲԵԿԵԱՆ
Ներքին եւ Ներվային հիւանդութիւններ
Ընդունում է առաւօտեան ժամի 10—12-ը և երեկոյեան ժամը 6—7։ Լերմոնտօվսկայա փողոց, տուն № 16։ Տէլէֆօն № 1087։
(ա. օ.) 43—50

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8։ (ե.ո.)77—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Դ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային, վեներական և սիֆիլիսական հիւանդութիւնների. ընդունում է հիւանդներին ամենայն օր, առաւօտեան 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը։ Կուկիա, Սեմեօնօվսկի փողոց № 16։
(ու. կ. ե.) 16—20

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտօվսկի և Պասկևիչյա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն)։
(ա. օ.) 37—100

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի։ Ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար. 77 երգ շարժական խաղերով. 112 օրինակներ աշխատանքի համար.—գինն է 3 ր. 10%—յատկացրված է հայ արկածեալների օգտին։ Դիմել Թիֆլիս, Սօլօլակ, Պասկևիչի փողոց, № 13։
(հ. կ. ե.) 24—28

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Վերսկսեց ընդունել հիւանդներին Պեատիգօրսկում մայիսի 1-ից։ Пятигорскъ, Верхній бульваръ № 14, д. Кн. Гирей.
(ե.հ.կ) 19—20

Բ Ժ Ի Շ Կ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Ընդունում է հիւանդներ հանքային Ջրերում. Կիսլօվօդսկ հիւանդանոց Րօսսիա № 14. վեներական և մորթու հիւանդութիւններ։ Гостиница Россія № 14.
2—20

ԲԺՇԿԱՊԵՏ
Լ. Յ. ԲԵՐԲԵՐԵԱՆԸ
Նախկին տարիների նման ընդունում է հիւանդներին Եսսենտուկում և Կիսլօվօդսկում։
(ե. հ. շ.) 8—10

Մի ընտանիք, որի համարեա բոլոր անդամները հիւանդ են, շատ նեղ վիճակի մէջ է գտնվում, և խնդրում է բարերարներից, ուշադրութիւն դարձնել, օգնութիւն հասցնելով։ Նուէրները ուղղել հետևեալ հասցէով՝ 5 уч. Петхаинская ул. № 2 ц. Степанова. Ал. Сарибекіанъ. (շ.կ.ե.) 3—3

Տրվում է մէկ կամ երկու սենեակ կահկարասիքով և ճաշով։ Հասցէն՝ Գանովսկի փող. № 12։ 2—2

Լոյս տեսաւ
ԱՌԱՔԵԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ
ԱՌԱԿՆԵՐԸ
Գինը 50 կօպէկ
Ծախվում են «Կենտրօնական» և «Գուտտենբերգ» գրավաճառանոցներում։
(հ. շ. ե.) 2—6

Արտասահման գնալու պատճառով ծախվում են Վարշավայի կաղնի բուֆէտ, հացի սեղան և 18 աթոռներ. ընկուզէ փոքր բուֆէտ, դահլիճի կահկարասիք, մահճակալներ և տնային այլ իրեր, ԲԵԿԿԵՐԻ ՊԻԱՆԻՆՕ։
Դիմել Սօլօլակ, Գուդօվիչի փողոց, տուն № 17. առաւօտեան ժամը 9—11 և երեկոյեան 5—7-ը։ 6—6

Գանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրօնական ՀԻՒՐԱՆՈՑՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլաւնի հոգևոր սեմինարիայի դիմաց

„ՆՕՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ“

մականունով։ Գները 70 կօպէկից մինչև 2 րուբլի։ Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով։
Ալէքսանդր Յարութինօվ
(հ. կ. ե.) 23—100

Թիֆլիսում վաճառվում են
ՊՐՈՖ. ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆՑԻ
հետևեալ աշխատութիւնները.

Ղազար Փարպեցի և գործք նորին, հետազօտութիւն	1 50
Ծրագիր հայ ազգագրութեան (վերջին օրինակներ)	» 50
Խորենացու պատմութեան աշխարհաբար թարգ. մասին	» 25
Գիրք Մնացորդաց ըստ հնագոյն հայ թարգմանութեան (նորագիւտ), 2 լուսագիր նմանահայ	2 »
О нѣк. географич. названіяхъ древ. Арменіи	» 25
Армянскій Эпосъ въ исторіи Арменіи М. Хоренскаго, изслѣдованіе и матеріалы	3 »
Армянскіе Аршакиды въ исторіи Арменіи М. Хоренскаго, изслѣдованіе и матеріалы	3 »

Դիմել՝ Կենտրօնական գրավաճառանոց և Թիֆլիս—«ԳՈՒՏՏԷՆԲԵՐԳ» գրախանութը։
(կ.) 10—10

ԱՄԱՌԱՆՈՑ
ԲԷԼԻ-ԿԼԻՒՉՈՒՄ
Հայոց դպրոցի շինութեան վերեւ յարկը բաղկացած հինգ սենեակից խոհանոցով, տրվում է մատչելի գնով։ Դիմել նամակով կամ անձամբ Բէլի-Կլիւչ՝ Գէորգ Բայրամեանց։
(ե. չ. հ. ու.) 1—4

Լոյս տեսաւ
Հայոց Ազգագրական Ընկերութեան
հրատարակութեամբ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
Եռամսեայ, պատկերազարդ հրատարակութեամբ
1906 թ. №№ 1 և 2 առանձին-առանձին
Բաժանորդագինն է տարեկան՝ 5 ր., կէս տարվան՝ 3 ր.,—3 ամսվան՝ 1 ր. 50։
Դիմել՝ Въ Редакцію журнала «Азгагракань Андесъ». Тифлисъ.
1—3

Նոր-Նախիջեւանի հայոց երկսեռ երկդասեան ծխական դպրոցի հոգաբարձութիւնը առաջիկայ 1906/7 ուսումնական տարվայ համար հրաւիրում է երկու գիմնազիստ վարժուհիներ ռուսաց լեզուի, թուաբանութեան ու ձեռագործի համար։ Հարկաւոր է նաև մի ճեմարանաւարտ կամ Ներսիսեանաւարտ ուսուցիչ, որը պէտք է աւանդէ ուրիշ առարկաների հետ ձայնագրութիւն և ղեկավարէ եկեղեցական քառաձայն խումբը։ Ցանկացողները թող դիմեն հոգաբարձութեանս մինչև առաջիկայ յուլիս ամսի 20-ը։
Ի դիմաց հոգաբարձութեան Մամիկոն Ղազարեան Մելքիսեդեկեան։
1—3

Թիֆլիսի ռէալական դպրոցի 5-րդ դասատան մի աշակերտ դասեր է որոնում։ Հասցէն՝ Тамаринская ул. д. Лежава № 1. Г. В. 3—3

Յունիսի լոյս 6-ի գիշերը Ռոստովից Բագու գնացող մարդատար գնացքում № 10, 2-րդ կարգում՝
ԳՈՂԱՑՎԱԾ Է
իմ վերնազգեստը, որի մէջ կային՝ 1) անցագիր, 2) երկու ժուրնալներ 600 րուբլու, Ռոստովի Ս. Բ. և Ս. Ս. ֆիրմաների, 3) 500 րուբլու Երևանի Ազօվօ-Դոնեան վաճառականական բանկի մէկ հատ փոխանակագիր, 4) և անդամավճարի մէկ 140 րուբլու ընկարագիր փոխարժէ վարկի 2-րդ ընկերութեան։
Երևան, Յովհաննէս Սարխօշեան
(չ. հ. ու.) 3—3

Բ Ժ Ի Շ Կ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
Մասնագէտ ներքին և երեխայոց հիւանդութիւնների։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.
Միխայլօվսկի պր. տ. Ճավճանիձէի № 36.
(կ.չ.ու.) 19—50

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Փօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր. երեկ.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 15 ր. գիշ.
Ալեքսանդրոպոլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր. ցեր.
Ալեքսանդրոպոլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր. գիշ.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր գիշ.
Կր հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր. առ.

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ
Մօսկվայի քաղաքային դպրոցների ուսուցիչների

Պրակ ա. Խնդիրներ և օրինակներ հարիւրի շրջանում։ Խնդիրները դասաւորված են տեսակներով, Ա. և Բ. տարի 30 կ.։
Պրակ բ. Խնդիրներ և օրինակներ ամբողջ և անուանական թուերով հազարի շրջանում։ Խնդիրները դասաւորված են տեսակներով, Գ. տարի 30 կ.։
Պրակ գ. Խնդիրներ և օրինակներ կամաւոր մեծութեան ամբողջ և անուանական թուերով Դ. տարի 30 կ.։

Փոխադրեց և յարմարեցրեց հայոց դպրոցների ծրագրին Ա. Սպարապետեան։
1—3

ԲԱՑՎԱԾ Է 1906 Թ. ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
„ՆՈՐ ԿԵԱՆՔ“
Գրական, հասարակական և քաղաքական շաբաթաթերթ, որ հրատարակվելու է Նոր-Նախիջևանում։
«Նոր Կեանքը» լինելու է առաջադիմական և պատկանելու չէ որ և է կուսակցութեան։
Շաբաթաթերթիս բաժիններն են 1) Առաջնորդող. 2) Ժամանակակից հարցեր. 3) Տեղական կեանք. 4) Գաւառական կեանք. 5) Գրական բաժին (ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ, բելլետրիստիկա, բանաստեղծութիւն և այլն). 6) Արտասահմանի կեանք. 7) Քրօնիկօն. 8) Մամուլ. 9) Թատրօն և գեղարուեստ. 10) Շաբաթվայ լուրեր. 11) Գրախօսութիւն. 12) Թղթակցութիւն. 13) Խառն լուրեր. 14) Յայտարարութիւններ։
Գինն է յուլիսի 1-ից մինչև տարվայ վերջը 2 րուբլի։
Հասցէ՝ Нахичевань На-Дону 1-ая Соборная ул. № 23։
6—12 (կ. ե. հ.) Հրատարակիչ՝ Գր. Բեգլեան

Բացված է բաժանորդագրութիւն և լոյս կը տեսնի յունիսի 12-ից անընդհատ հայերէն լեզւով
„ԽԱԹԱԲԱԼԱ“
Երգիծաբանական-սատիրական գունաւոր պատկերազարդ երկշաբաթաթերթ։
Տարեկան գինն է Թիֆլիսում 2 ր., կայսրութեան ուրիշ տեղերում 2 ր. 50 կ., արտասահման 12 ֆր.։
Խմբագրատունը գտնվում է Թիֆլիս, Վերա՝ Մատինեան փողոց սեփ. տուն № 4։ Հասցէն՝ Тифлисъ, редакція юморо-сатирическаго журнала «Хатабала»։
4—5 Խմբագիր-հրատարակող՝ Աստ. Երիցեան

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.

Электропечатня типографскаго Т—ва «Гермесъ» Мадат. ул. № 5